

✓ Ltn
✓ 2072

1999

ՏԻՐԱՅՈՒ ՄԱՐԿՈՍ


ՎԵՊԻԿ

ՃԻՐԱԿԱՅ ԿԵԱՆԲԻՑ



ԱՇԽԱՏԱՍՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐՈՒԿ ՏԵՐՄԻՆԱԿԱՆՆԵՐ



ԱՂԵՐՍԱՆԴՐԱՊՈՒ

ՏՊԱՐԱՆ ԿՐԹԱՆՈՒՄ Մ. ՄԱԼԽԱՅԱՆՑԻ

Тип. А. Малхасянца на Алекс. ул. д. Теръ-Кеворкова.

1893

1632

Дозволено Цензурою. Тифлисъ, 21-го Октября 1892 г.

72072-60

3P 2075

ՏԻՐԱՅՈՒ ՄԱՐԿՈՍ

ԾԻՐԱԿԱՅ ԿԵՆՆՔԻՑ

ՎԵՊԻԿ

Ա.

«Մինչև երբ քաշ տաս, քս, ամօթ չէ. ասը
ինչո՞ւ ես մարդկանց խաբէրում. մէկ անգամ
սաղ ջուղապմ տուր, մենք էլ պրծնենք, նրանք
էլ, քանի՞ տանիս ու բերես» ասաց Նանազիւլը
իւր ամուսնուն, որ քիչ հեռու նստած, իւր
սրբերներն էր կարկատում:

Գոգորը շատ անգամ լսել էր իւր կնոջից այն
պիսի հարցեր և ամեն անգամ էլ՝ «Կողդը՞ծիք վէ՛,
շատ մի խօսիր» բառերով պատասխանել ու լռել
էր: Բայց այսօր Նանազիւլը մի փոքր՝ բարկացած
և շեշտելով էր արտասանում բառերը. այդ պատ-
ճառով էլ Գոգորը պատասխանեց.

«Ի՞նչ շատ ես շտապում, ո՞վ կնիկ:

—Շատ ես շտապում սրն է, ինչո՞ւ չես վեր-
ջացնում. պնդո՞ւ ասա, միտքդ ի՞նչ է:

«Իմ միտքս այն է, որ ես գրանց աղջիկ չեմ
տալ, թէկուզ ելնին երկինք, իջնին գետինք: Ես

իմ աղջիկը պիտի տամ Ասլանենց Սաքանին: Հիմի հասկացանք իմ միտքը:

— Ճշմարիտ է, Սաքանը խելօք տղայ է, բան չունիմ ասելու, բայց քնչ անես, որ Սոնան Սաքանին չի առնի, նրա աչքը Տիրացու Մարկոսի վրայ է:

— Կառնի, բան չի ասի, մէկ աչքը լալով, մէկը խնդալով կառնի, և, յոյս Աստուած, շատ էլ բաղդաւոր կլինին:

«Ա՛յլ, ինչք՛, ցաւդ քնչ է, գլո՛ւխը քարը, ո՛ւմ ուզում է, նրան կտամ, որ ժամանակին մեղքն էլ իրա շինքը լինի վարձքն էլ:

— Ի՛նչ էլ ես գլուխդ քարը տուել, քո աղջիկն էլ: Սաքանի պէս թաւալան տղին թողած, ես Մարկոսի պէս գողին աղջիկ չեմ տալ, չէ:

«Չարմանում եմ, որ դու էլ օտարներու խօսքերուն հաւատում ես: Ինչո՛ւ է գող, ո՛ւմ քնչն է գողացել:

Ի՛նչպէս թէ, ո՛ւմ քնչն է գողացել: Կակոյենց մորթած ոչխարը դրանց տանից չ' հանեցիք, Խեչանենց հաւերու համար դրան չ' սլատեցիք. տօ՛, ես դրա ո՛ր մէկ գողութիւնը ասեմ, ո՛ր մէկ անկարգութիւնը պատմեմ:

— Ճշմարիտ է, շատ առաջ մի քանի ջահիլութիւններ արաւ, բայց հիմայ . . .

— Չայնդ կտրի՛ր դու բանից տեղեկութիւն չունիս, հիմայ աւելի վատ է: Առաջ քանի փոքրը էր, հաւ ու հաւկիթ էր գողանում. բայց այժմ ձուռի գողը ձիւռ գող է դառել:

— Գրանք բոլորը թշնամու խօսքեր են: Ալլափչուն ասենք, շատ լաւ տղայ է, տիրացու է, դիտուն է, ժամանակին տէրաէր կ'լինի, մարդ կը դառնայ: Գու արի՛, ինձ լսիր, աղջիկը իւր սիրածից մի բաժանիր, սկսեց համոզել և աղաչել կինը:

«Շատ լաւ ես ասում, չ'բաժանենք. դէ, թող քերեն 300 ռ. 3 խալաթ, ես էլ վերջացնեմ, թող զնան իրանց մուրագին հասնին:

— Երեք հարիւր մանէթ. զարմացած բացափանչեց կինը: Ի՛է մէկ անգամ ասան, տուն, տեղ, չուլ, փալաս ծախեն քեզի տան, էլի՛: Այսօր տեղեկութիւն էին տուել թէ 150 ռ. սլատրաստ է. 2 հատ էլ լաւ խալաթ:

— 2է, չէ ես քո աղջիկ չեմ ծախում, որ 150 մանէթի տամ: Իմ աղջիկը Կոռչենց աղջկանից էլ պակաս է, որ մինչև 250 մ. նաղտ չառան. «հա» չասին: Սաքանի հայրը 300 մանէթ, 2 լաւ խալաթ սլատրաստել և այս երեկոյ էլ պիտի գան, որ վերջացնենք:

«Հարիւր լիսուն մանէթի համար մի կտորիք քո աղջկայ սիրտը, մի լինիր նրա ասլագայ ան-

բախտութեան պատճառը:

Երկար ու բարակ խօսելը աւելորդ է, եւ երկուսին էլ տեղեկութիւն եմ տուել, որ իմ աղջկայ գինը 300 մ. 4 խալաթ է, երկու կողմի ծախքըն էլ իրանց վրայ, ով կամք ունի, թող առաջ գալ: Հասկացա՞ր. բէլինդ մտա՛ւ: Կէ բաւական է, գլուխս ցաւացնե՞ս, սոսց Գոգորը և բարկացած դուրս ելաւ:

Սոնան մութ անկիւնից իւր ծնողների խօսակցութեան բոլոր մանրամասնութիւնները լսեց և էլ չկարողացաւ իրան գոպել, արտասուենքը հեղեղի պէս թրջեցին նրա վարդագոյն արտերը:

«Կըխեղդւի՛մ, ջո՛ւրը կ'ընկնի՛մ, աղու կուտեմ», Սաքանին չեմ առնի, Մարկոսից չեմ բաժանուի: Ես ուխտել եմ Մարկոսի հետ ապրիլ, Մարկոսի հետ մեռնիլ: Թո՛ղ գող լինի, թո՛ղ օրական հացի կարօտ լինի, միայն թէ Մարկոսը լինի իմ նշանածը:

Այս խօսքերը Սոնան տառամ էր ինքն իրան, ծածուկ. նա երբէք չէր լանդգնի հօր վճռի դէմ ազատ բողոքելու:

Բ.

Երեկոյ էր: Գլուզացիք ցերեկւայ գործից պըրծել, տաւարը ջրել, գուռ ու երթիք պինդ ծած-

դել, ձիթի ճրագները վառել, օջախները տաքացրել, գամի յոտէքում, իրար գլխի հաւաքել, հէքեաթներ, տամաներ, բամբասանքներ առաջ էին քերել, և օրերը անց էին կացնում:

Այդ օրը Խումարենց Գոգորի տանը սպասողական դրութեան մէջ էին: Գոմի յոտէն սովորականից աւելի մաքրուած, խալիչաներ քցած, բառներ շարած, օջաղի կրակը թեժացրած, Գոգորն էլ, օջախի մօտ նստած, մի թխկոց, մի դռան ճուղ, մի սոնաձայն լսելիս, խոկոյն վեր էր թըռչում տեղից, և տեսնելով, որ դարձեալ սխալած է, նորից նստում և ընկնում նոյն մտածմունքի և սպասողական դրութեան մէջ:

Մինչդեռ Նանաղիւլը իւր ամուսնու խիստ հրամանին համաձայն պատրաստութիւն էր տեսնում, Սոնան, ողբալով, արտասուենք խեղդելով, քրթմնջելով օգնում էր իւր մօրը, իսկ Գոգորը Սոնալի թանկութեան և էժանութեան վրայ էր մտածում, լանկարծ գոմի դուռը բացւեց և ներս մտան չորս հոգի:

«Քարի իրիկուն», կրկնեցին ամեքը և ծալապատիկ նստեցին ցոյց տուած տեղերը:

— Այ՛ Ստուճոյ բարին, դուք բ՛որով, հաղար բ՛որի» ամեքի բարեւ առանձին առանձին առաւ Գոգորը և նստեց ամենից ներքև և հար-

ցրեց եկւորնի «քէֆը—հալը»:

Իսկոյն սկսեցաւ խօսակցութիւնը:

«Քէֆն էլ քոնն է, Գոգո՛ր աղբէր, օջաղդ վառել, յոտե՛դ սարքել, գործից պրծե՛լ, քէֆիդ նրստել ես, սկսեց Քեօխվան,

—Ձեզ պէս բարեկամները ողջ լինին, փանօք Աստուծոյ, ձեր շնորհիւ կապրինք, էլի՛:

—Երեսիդ ասելու չ'լինի, միջամտեց երկրորդ հիւրը, քեզ պէս հալալ ունչբար մեր գիւղում ոչ մի հատ չկայ: Գործդ սաղլամ—ճշմարիտ ես բռնում, Աստուած էլ տալիս է:

—Ի՞նչ անենք, աղբէր, հալած իւրի տեղ ընդունելով Գոգորը իւր հիւրի շողոքորթութիւնը՝ մի կտոր հաց ունչբարութեան երեսից ենք ուտում, էլ ուրիշ ի՞նչ արհեստ ունինք, ի հարկէ պիտի մեր գործը հալալ բռնենք, որ Աստուած էլ յաջողի: Իսկ երբ մեռանք, այնուհետեւ ինչ ուզում է, թող լինի:

—Մեռնելուց յետոյ ի՞նչ կայ, որ ինչ լինի առաջ եկաւ երրորդ հիւրը, թէ աշխարհիս մէջ պաս պահել ես, ժամ գնացել ես, մատաղ արել ես, . . . արդար մարդ ես, հոգիդ կ'գնայ գրախտը, Հայր Սբրահամի գոգը, խնկի ծառերի տակ, անմահական աղբիւրների վրայ, մշտադաւար ծառերի մէջ ճլվալիւ. իսկ եթէ այդ բաները չես արել, մեղաւոր մարդ ես, կպրէ կարասը, մա-

զէ կամուրջը, եօթը բերնանի անկուշտ վիշապը և դժոխքի կրակը պատրաստ է: Տարին 12 ամիս պիտի այրւիս, վերջ չկայ. ծարաւ ես՝ ջուր չկայ. սոված ես, հաց չկայ. մեռնել կուզես մահ չկայ:

—Է՛հ, Աստուածներդ կ'սիրէք, էդ դժոխքի ու դեւերի պատմութիւնը թողէք, դժգոհութիւն յայանեց չորրորդ հիւրը, ես վախենում եմ, ջանս վրէս սուսում է: Գիշերը երազիս էլ դե ու սատանայ չի մնայ, բոլորը կ' թափին վրէս ու կը խեղդեն ինձ:

—Տօ, երազ ասաց, միտս եկաւ, ասաց քեօխվէն, էս գիշեր մի զարմանալի երազ եմ տեսել:

«Խէր լինի, պատասխանեց Գոգորը:

—Խէրն ու բարին արեւդ լինի, պատասխանեց երազատեսն ու սկսեց պատմել:— «Ես մի սպիտակ ձիու վրայ նստած անցնում էի մի բաղի միջից: Հազարաւոր մարդիկ ծառերի տակ հաւաքած խնձորներ էին ծախում: Սմեն կողմից ինձ կանչում էին, «այ սպիտակ ձիաւոր, արի՛ արի՛, մեր խնձորները համով են, կարմիր են, հասած են»: Ես էլ ամեքի մօտ դնում, խնձորները ձեռքից առնում, հոտ քաշում կրկին տալիս էի իրանց, թէ «իսկ է, լաւը չէ»: Վերջը մօտեցայ մի կարճահասակ մարդու, ձեռից մի կարմիր խնձոր առայ, և, հէնց որ ուզում էի բաղից դուրս գալ, մի սև ձիաւոր առաջս կտրեց, և ուզում էր խնձորը

ձեռնիցս խլի: Բարկութիւնս եկաւ, և հէնց որ մի դամչի չ'քաշեցի ձիուս, հայվանը կատաղեց, սև ձիաւորին ոտնատակ տւեց ու ծտի պէս թրուցրեց ինձ: Սէկ էլ լանկարձ զարթեցայ, որ երազ էր»:

— Սև ձիաւորը քո թշնամիդ է եղել, խնձորը մի մուրազ է, լաւ է, որ չի կարողացել ձեռնիցդ խլել: Լաւ երազ է, բարի գործի պիտի պատահես, մեկնեց Գոգորը:

Այս բոպէիս Նանագիւրը, իւր մարդու ակնարկութեան համաձայն, քիթ ու բերան փաթած ներս մտաւ, հիւրերի ձեռքը, ըստ աւագութեան, համբուրեց, չետոյ հացի սեղանտախտակը դրեց, ու վրան շարեց երկու հատ կարմրացրած հաւ, մի լաւ լանկեառի միսու, մածուն, կարագ, պանիր և մի շիշ էլ արաղ:

Գոգորը սրտանց ցանկանում էր իւր հիւրերին լաւ պատւել, որովհետև հազարից մի անգամ իւր տունը ոտ էին դրել, և մանաւանդ որ մինը իրանց դիւղի քեօխման էր, որից միշտ կախում ունէր, միւսը՝ իւր պտակած աղջկայ կեսրարն էր, երրորդը՝ Սոնայի կնքահայրն էր, իսկ չորրորդը՝ Նանագիւրի եղբայրն էր: Բոլորն էլ Գոգորի տան համար արժանաւոր հիւրեր էին, որոնց Աբգարը Սաքանի հայրը-գիտմամբ ընտրել բերել էր, որ գործը հեշտութեամբ գլուխ գայ:

— Գէ, մ'օտ համեցէք, խնդրեց Գոգորը, հնց անուշ արէք, և օղիի լի բաժակը դրեց քեօխմի առաջ:

— Գոգոր աղբէր ջան, գիտես ինչ կայ, օջախըդ վառ, լստեդ տաք, սեղանդ լի և առատ, ախորժակներս բաց, բայց մինչև որ դու այս արաղը չ'խմես և մեզ մի «աչքալոյս» չասես, իմ ախորժակը չի բացւի և ես քո հացը չեմ կարող ուտել: Հիմի, դու քո Ասուած, եթէ մեզ կը սիրես, մի «աչքալոյս» ասա՛, կշտացրու ու տուն ճամպէ, չես սիրէ, սոված դուրս արն քո տանից. ասաց քեօխման և օղիի լի բաժակը կրկին դրեց Գոգորի առաջ:

— Ի հարկէ, այդպէս է, շատ լաւ է ասում քեօխման, հաստատեցին միւս հիւրերը: Սենք էլ քեօխմի հետ եկել ենք, նրա հետ էլ կ'գնանք. նա կուտի, մենք էլ կուտենք. չի ուտի, չենք ուտի:

— Գոգորը ընկաւ անելանելի դրութեան մէջ. նա գիտէր, որ այսպիսի հանգամանքներում, ըստ տեղական սովորութեան, զրանք իրանց վճռին հաստատ պիտի մնան:

— Ի՛նչ «աչքալոյս» ես ուզում քեօխմայ ջան, չլինի՞ քեհակինը տղայ է բերել, սկսեց հանաքի վերածել Գոգորը:

— Զէ, չէ, խօսքը կտուրը մի քցիր, դու շատ

լաւ ես հասկանում մեր գալստեան պատճառը
և մեր խնդրած աչքալոյսը:

Տիրեց խորին լռութիւն: Գոգորը ընկաւ
մտածողութեան մէջ: Նա աւելի շատ էր շտա-
պում շուտ աչքալոյս ասել, գործը վերջացնել,
բայց մի կերպ աշխատում էր տեղեկանալ թէ փո-
ղը նազոտ է, 300 ր. լրբւ է, թէ՛ պակաս:

— Հը, Սանահէր Գոգոր, ինչո՞ւ ես լռել,
մենք քո՞ երեսին ենք նայում, քեզանից ենք
պատասխան սպասում, քնչ ես մտածում, միջա-
մտեց կնքահայրը:

— Ի՞նչ ասեմ, չգիտեմ, լեզուս կապեցիք:
Սխր դա գաւակ է, հաւի ճուտ խոմ չէ, որ
վերցնեմ դէն քցեմ:

«Շատ լաւ ես ասում, պատասխանեց քեօխվէն,
բայց դա նոր լուր չէ, մի ամբողջ տարի է, որ
Սբգարը քո աղջիկը ուզում է իւր տղին. դու
էլ մի ամբողջ տարի է մտածումես. բաւական
չէ. դէ վերջացրու էլի»:

— Գոգոր ջան, մտածելու ոչինչ չունիս, վատ
տեղ որ լինի, չենք կամենայ: Սբգարը լաւ, տղէն
լաւ, մարդու դուլվածը աշխարհին յայտնի, 300
մանէթ 4 խալաթն էլ հէնց այս րոպէիս «աչքա-
լոյս» ասելոյն պէս կստանաս, բացատրեց Նանա-
գիւլի եղբայրը:

Գոգորին տարակուսութեան մէջ քցողը փողն

էր և ոչ թէ ծնողական սէրը: Հէնց որ լսեց
թէ փողը նազոտ է և 300 ր. լրբւ է, խսկոյն լեզուն
բացւաւ:

— Եթէ Զեզի պէս պատուաւոր մարդիկը միջ-
նորգութիւն չանէին . . .

— Լաւ, լաւ, ընդհատեց կնքահայրը, խօսքը
կիսատ թողնելով Գոգորի բերանը, ճառ խօսելու
ժամանակը չէ, մենք սոված մեռանք, շուտ արն
մի աչքալոյս խմիր:

Հէնց այս րոպէիս քեօխվան 300 մանէթը
ահագին ծալքով դրեց Գոգորի առաջը և աւե-
լացրեց. «4 խալաթն էլ վաղը ինձանից կստանաս:
Դէ վերջացրու, կամ «աչքալոյս» խմիր, կամ վեր
կենանք գնանք»:

Հիմալ էլ խալաթի ապառիկ մնալը քցեց Գո-
գորին տարակուսութեան մէջ և սկսեց ձգձգել:

«Քօխվալ ջան, այս տարի 350 մանէթի այն-
պիսի աղջիկներ տուին, որոնք իմ աղջկան ծառա-
ներ կ'լինէին, նկատեց Գոգորը և փողը կրկին
դրեց քեօխվի առաջ, 350 ր. կառնիմ»:

— Սղբէր, քնչ պինդ մարդ ես եղել, բարկա-
ցաւ քեօխվէն, այսքան մարդու պատիւը, աղա-
չանքը 50 մանէթ չարժէ, և փողերը կրկին
դրեց Գոգորի առաջ. սո՞ թէ Սասուած կ'սիրես,
մի չարչարիք մեզի, եփած հաւերին նայելով բե-
րաններին ջուրը գնաց: Այ տղայ, վաղիր մեր

տանից խալաթներն էլ բեր, թող աչքը տեսնի, միամտի, կարելի է, չի հաւատում:

Խալաթներն է եկան. երեք արշին կապույտ մահուտ, Նանագիւլի համար մի լաւ շալ և մի գոլգ կարմիր ստից և մի գլուխ շաքար: Ել տարակուսելու բան չմնաց: Գողօրը օղիի բաժակը ձեռքն մօտեցաւ Արդարին և ուրախ սրտով ասաց.

«Մէկ աղջիկ է, դուրբան էղնի ձեզի, աչքերն երգ լոյս»:

Երկու խնամիները համբուրեցին և փոխադարձ աչքալույսի բաժակներ նուիրեցին միմեանց:

Սրանց այս խօսակցութեան ժամանակ մօտիկ բարեկամները, հետզհետէ հաւաքւելով, սրտառամ էին աչքալույսի: Հէնց որ Գողօրը աչքալույսի աւետիսը տուեց, կարծես մի վառօղի փամփուշտ արաբեց: Ամեն կողմից դողողում, միմեանց աչքալույս են ասում: Օղիի բաժակները շատացան, զինու շիշերը առաջ եկան, սեղանակիցները բազմացան, զիւղական խաղաղ խրճիթը մի առանձին կենդանութիւն ստացաւ: Հրաւիրեցին քահանային, Սոնային առաջ բերին, Սաքանին կանչեցին, զոլգ կանգնեցրին, մօմերը վառեցին, քահանան օրհնեց նշանադրութիւնը, Սաքանը իւր ձեռքով մատանին գրեց Սոնայի մտոր և քողքեցեց գլխին: Ուրախութիւնը քանի զնաց թէժացաւ:

— Քեօխվալ ջան, էս էլ խմենք ձեր թանկագին կենացը, որ այնպէս սիրուն խնձորը փախցրիր երազիդ մէջ սև ձիաւորի ձեռքից: Այն կարմիր խնձորը Սոնան էր, Սև ձիաւորը Մարկան հայրն էր, որ կաղ իշով քարւան էր մտել և ուզում էր Սոնային մեր ձեռից խլել:

Ամեքը համակրեցին երազի յաջող մեկնութիւնը, և լիքը լիքը խմեցին քեօխվի կենացը, որը երազ չէր տեսել, ալլ՝ հնարել էր այդ երազը:

Կերան խմեցին և գիշեր բարի մալթելով միմեանց, զնային իրանց տները ուրախ տրամադրութեան տակ:

Գ.

Առաւօտեան արշալույսը բացւելոյն պէս՝ Սոնայի նշանադրութեան լուրը կայծակի արագութեամբ տարածւեցաւ գիւղում: Ամեքը ուրախ էին և յաջող նշանադրութիւն էին համարում: Ալեկոսկած ողբում էին միայն երկու սրտեր, որոնց իրարից բաժանել էր ծնողական շահաիրութիւնը:

«Ամօթ է, ամօթ է, մեղադրում էին Մարկանին նրա ընկերակիցները, կնիկ խոմ չէս, որ լալիս ես: Թէ տղամարդ ես, գլխիդ փափախունիս, դու էլ քո տղամարդութիւնը ցոյց տուր,

թէ չէ, դրանից ձեռք քաշիր, ուրիշ աղջիկ ուղիր»:

— Ի՞նչ անեմ, այս դէպքում տղամարդու-
թիւնը նշանակուածիւն չունի, փող է հարկաւոր,
բայց ես չունիմ: Նրանք տուել են 300 մ. 4 խա-
լաթ. եթէ 10 մ. աւելացնեմ, Սոնային նրանց
ձեռից կ'իսլեմ, բայց սրտեղից ճարեմ 310 մնթ.
որ նազտ Գոգորի առաջը դնեմ» տրտնջում էր
Մարկոսը:

— Թասիպ ունեցող մարդը իւր հագի շապիկը
կ'ծախի և իւր խօսքը յառաջ կ'տանի, բորբոքում
էին Մարկոսին երիտասարդները:

— Ա՛խ, ի՞նչ ասեմ, որ ի՞նչ հասկանաք. այնպէս
էք խօսում, որ կարծես կռապաշտ Գոգորին չէք
ճանաչում: Նրա հոգին ու Աստուածը փողն է,
ով աւելի տուեց, նրան կտայ: Եթէ ես աւելաց-
նեմ, նրանք էլ կաւելացնեն. ես նրանց հետ
տորգ չեմ կարող մտնել, նրանք հարուստ մար-
դիկ են, որ բարկացան, մինչև 1000 մտնէթ
կ'բարձրանան:

— Ի՛է որ այդպէս է, քո լացն ու կոծն էլ
աւելորդ է, սասցին երիտասարդները և հեռացան:

Գ.

Անցան օրեր, շաբաթներ և ամիսներ, բայց

Սոնայի սէրը Մարկոսի սրտից ոչ միայն չանցաւ,
այլ ընդհակառակը քանի գնաց բորբոքւեցաւ:
Խելագարւածի նման զիշեր ցերեկ մտածումէր
Սոնայի սիրով խոցւած վերքերին մի սպեղանի գլու-
նելու, բայց իզուր: Նա շատ բաներ մտածեց,
շատ ամրոցներ շինեց ու քանդեց, շատ ծրագիր-
ներ կազմեց և վերջ ի վերջոյ կանգ առաւ եր-
կու կէտի վրայ:

1, Փախցնել Սոնային.

2, Սպանել Սաքանին:

Երկուսն էլ Մարկոսի համար շատ հեշտ էր:
Բայց ամենից առաջ նա մտածում էր առանց ա-
րիւն թափելու գործը գլուխ բերել, իսկ հակա-
ռակ դէպքում վերջինը կատարել:

Սաքանի հայրը լսելով Մարկոսի սպառնա-
լիքները, տեսնելով նրա խելագարւած գրուածիւ-
նը, քաջ ծանօթ լինելով նրա վերին աստիճանի
անխիղճ և յանդուգն բնաւորութեան հետ, միշտ
երկիւղ էր կրում, թէ մի գուցէ փախցնեն Սոնա-
յին և իրան քցեն անվերջ կռիւների և անշիջա-
նելի կրակի մէջ: Այս պատճառով ամեն տեսակ
զգուշուածիւններ գործ դրեց: Խնամի Գոգորի դուռ
ու երթքի վրայ զիշեր ցերեկ պահապաններ կար-
գեց և սկսեցին քայլ առ քայլ հետևել Մարկո-
սին: Սոնային խստիւ արգելւեցաւ աղբիւր գնալ,
հանգ դուրս գալ: Խեղճ աղջիկը դառել էր մի

անբաղդ ստիակ, որ իւր սիրելի վարդից հեռու, գիշեր ցերեկ կողբար, փակած վանդակի մէջ:

Մարկոսը, պարզ տեսնելով, որ իւր հակառակորդները Սոնային դրին երկաթէ վանդակի մէջ և անհնարին դարձրին նրան փախցնելու հարցը, սկսեց իւր բոլոր մտածողութիւնը կենդրոնացնել Սաքանին սպանելու գործի վրայ:

— Ի՞նչ անեմ, Տէր Աստուած: Սոնային փախցնելու ալ ևս ոչ մի հնար չ'մնաց, ուրեմն կամայ, ակամայ պէտք է սպանել Սաքանին: Բայց այսպիսի հանգամանքներում անկարելի բան է. առաջին անգամ ինձ կ'իլաւառուորեն որպէս նրա թշնամի, մտածում էր Մարկոսը և ընկնում անելանելի դրութեան մէջ: «Ոչ, այսպէս չի լինիլ, պէտք է մի խորամանկութիւն հնարել, պէտք է այդ անգութ հակառակորդներին միամտացնել, պէտք է խաբել, կեղծ նշանադրութիւն առաջ բերել, առերես պէտք է Սոնայից հեռանալ, ատելութիւն ցոյց տալ.

Մինչդեռ Մարկոսը անկիւնում նստած մտածում էր մի նոր խարդախութեան վրայ, նրա մայրը մօտեցաւ իւր վշտացած որդուն և սկսեց սովորական խրատները:

— Մարկոս ջան, որդի ջան, բալայ ջան, բաւական չէ մեզ տանջես, բաւական չէ մտածելով հալւելիս ու մաշւելիս: Այ որդի, Սոնան խոմ երկնքից

իջած չէր. նա չ'լինի, Սալւին լինի, քնչ որակաս աղջիկ է, Սոնայից հազար անգամ էլ սիրուն է. . .

— Գիտեմ, նանի ջան, գիտեմ, լաւ աղջիկ է, բայց դրա հայրն էլ 150 մանէթ է ուզում. ես այդքան փողով աղջիկ ուզողը չեմ, կարողութիւն չունիմ: Ես այնպիսի աղջիկ պիտի ուզեմ, որ նրանք ինձի փող տան և ս'չ թէ ես նրանց:

— Այդպիսի աղջիկ երազումդ էլ չես գտնի:

— Ես արդէն գտել եմ:

— Ո՞վ է:

— Սուլթանի աղջիկը:

— Զաւուի՞ն, սարսափած հարցրեց մայրը:

— Այո, քնչ պակաս աղջիկ է:

— Վնչ հալը գլխուս, խելքդ թուցրե՛լ ես, քնչ է, էն անզգամի զարտը ո՞վ պիտի քաշէ. 30 տարեկան է, է . . . :

— Էդ ձեր գործը չէ, ես սիրուն կնիկ չեմ ուզում, ես տուն կառավարող եմ ուզում:

— Այ որդի, գիժ ես ինչ է: Միտդ չէ, որ նրա հայրը էդ աղջկան տալիս էր գիւղի ժամհարի տղին, 200 մանէթ էլ վրէն փող էր տալիս, միջնորդն էլ քո հայրն էր, էլի գլուխ չեկաւ: Փամհարի տղէն չառաւ, հիմի գնաս գնւ առնիս. սաղ զեղը վրեներո ծիծաղացնես:

— Գլուխը քարն է տուել ծիծաղողն էլ, խօսողն էլ, բամբասողն էլ: Ես ստում եմ կարգին լինի,

1692

ձեր խօսքով լինի, եթէ ո՛չ, ինքս կ գնամ, կ նշան-
ւիմ և կ՝ պսակւիմ:

Երեկոյեան տուն եկաւ Թորոսը-Մարկոսի Հայ-
րը և, երբ լսեց իւր որդու առաջարկութիւնը,
չափազանց ուրախացաւ: Նախ՝ նրա համար, որ
Ջաւոյի հայրը-Ասլան աղէն հարուստ մարդ էր,
գիւղի մէջ կտրուկ և բարձր գիրք ունեցող իշ-
խան էր, 20 գիւղի գլուխն էր, զատաւորները մօտ
ազատ գնացող եկող ճակատով մարդ էր: Այդպիսի
մի քաջ խնամի ունենալու ցանկութիւն շատ շա-
տերը ունէին, բայց տարաբախտաբար Ջաւոն
շատ տգեղ և տարիքը անցած էր, այդ
պատճառով տղէրքը չէին առնում և երկրորդ
նրա համար, որ հազար ու միտեսակ ծախսերից
ազատուելուց յետոյ, դեռ մի քանի մանէթ էլ օժիտ
պիտի ստանար: Ել ժամանակ չկորցրեց, իւր
կնոջը համոզեց և իւր համաձայնութիւնը տուեց:

Ե.

Այս անցքից երեք օր յետոյ ամբողջ գիւղում
խօսակցութեան առարկան տիրացու Մարկոսի
նշանադրութեան լուրն էր: Ամեքը զարմանալով
հարցնում էին միմեանց.-«Ասէ՛լ էք, Ջաւոյին
տուել են տիրացու Մարկոսին: Ամենից շատ զար-
մանում էր Ասլան աղէն, որ գոռոզ Մարկոսը
իւր պառաւ աղջիկը ուզեց:

—Ջաւոյի բաղդն էր, տեսա՞ք, Ասուած ինչ

տեսակ բարի բախդի հանգիպեցրեց, խօսում էին
պառաւները:

Բախդի բան չկայ, նկատեց մի կին, փողը
ամեն բան կանէ: Թէ Մարկոսը, թէ հէրը փողի
համար հոգի կ տան: Ասլան աղէն փողով խա-
բել է:

—Չէ չէ, միջամտեց մի ուրիշը, ապում են
Ասլան աղէն մի դարուէջի գիր է անել տուել և
Մարկոսի սիրտը կապել է Ջաւոյի հետ, հէնց որ
պսակվան, համալիլի գորութիւնը կ կորչի, այն ժա-
մանակ շուռ ու կատու կ դառնան և իրար կ գզգեն:

—Թող ինչ ուզում են, ասեն, մտածում էր
տիրացու Մարկոսը, թող ինչպէս ուզում են բա-
ցատրեն, թող իմ նշանադրութիւնը հալած իւղի
տեղ ընդունեն, թող միամտին իմ հակառակորդ-
ները, թէ ես նշանած եմ և էլ կարիք չունիմ
այսուհետև ուրիշ բաների վրա մտածելու: Եթէ
իմ մտադրութիւնը գլուխ չ եկաւ, այն ժամանակ
հազար ու մի պատճառներ կարելի է գտնել և
Ջաւոյին թողնել: Շատերը իրանց պսակած կնա-
նիքն են թողնում. ես չեմ կարող իմ կեղծ նշա-
նածը թողնել»:

Անցկացաւ մի ամբողջ տարի, բայց դեռ Սո-
նան ու Սաքանը, Մարկոսն ու Ջաւոն պսակած
չէին: Սաքանին արդէն պսակելու պատրաստու-
թիւն էին տեսնում, երկու շաբաթ յետոյ հար-

ասնիքն էր. իսկ Մարկոսը զանազան պատճառներով իւր պսակը յետաձգում էր: Ամբողջ մի տարի Մարկոսը չար օձի նման սաղում էր Սաքանի ետեւից, բայց չէր կարողանում իւր չար նպատակը յաջողացնել:

Մարկոսը տեղեկութիւն հաւաքելով, որ շաբաթ օրը Սաքանը գնում է Փ. գիւղը, իւր մօրաքրոջը հարսանիք հրաւիրելու, ինքը չորս օր առաջ գիւղից անշարտացաւ, տանեցոց հաւատացնելով թէ գործ ունիմ:

9:

Ծեռ էր: Եղանակը սարսափելի ցուրտ. հիւսիտային քամին կամաց կամաց սրլում էր: Արեգակը փաղուց մայր էր մտել, դաշտերում ոչ ոք չէր երևում: Այդ տարածամտակուն մի երիտասարդ, ձեռքերը հինալ դրած, կարմիր ալլուխը բուկը կապած, գիւղական ճաշակով լաւ գուգւած դարգարւած, ետփունջան կուրծքին քաշած, աչք ու բերան բաշլղով լաւ պինդ փաթաթած, ձիւ վրա նստած շտապում էր առայ: Բայց դեռ կէս ժամուայ ճանապարհ ունէր: Ճանապարհը շատ խուլ էր. մանաւանդ՝ ձմեռները, շատ գործածական չէր: Ամիսներով այդ տեղից ոչ ոք չէր անցկենայ: Հազիւ հազ ճանապարհի հետքը երևում էր: Երիտասարդի ձին մինչև սրունքները ձան մէջ խրւելով, չոքելով ու կանգնե-

լով, կամաց կամաց զառիվայրից իջնում էր ձորի մէջ: Հէնց այդ տեղ երիտասարդի ձիւ սանձը բռնեց քիթ ու բերան ծածկած մի յաղթանդամ երիտասարդ և ձին ճանապարհից հանելուն պէս՝ յոգնած անասունը թաղվեցաւ ձիւնի մէջ և երկու ըսպէ մնաց անշարժ: Այդ յարմար միջոցին աւագակը բռունցքի մի կատաղի հարուածով ցրտահարւած ձիւտորի ուշքը գլխից առաւ: Կրկնեց հարւածները գլխի ամենավտանգաւոր տեղերում: Զին չարչարելով ոտի կանգնեց: Վրէժխնդրութեամբ արբած օտարականը ձիւ ոտնձր բռնած ճանապարհից դուրս ելաւ և ծածկուեցաւ բլրակի յետեւը. ուշագնաց երիտասարդին ձիւց վայր բերեց, ետփունջէն վրայից դէն գցեց, գոտիկը արձակեց, կուրծք ու փորը քայ տրեց, տարածեց կիսակենդան երիտասարդին ձան վրա, ձեռքերը ոտքերը, պարանով կապեց, իսկ ինքը դիւական ժպիտը երեսին ուրախանում էր:

— Դու հարուստ մարդ ես, և անխիղճ ես, որովհետև՝ քո հարստութեամբ համարձակում ես իմ սեփհականութիւնը, իմ սրտի սիրելին, իմ անուշ նշանածը, իմ նազելի Սոնան իմ ձեռից իլել: Ես էլ աղքատ եմ, փող չունիմ, բայց քեզանից շատ ոյժ ունիմ: Դէ այժմ մեռիք, հոգիդ առը, որ ես իմ Սոնայից չզրկեիմ:

Սաքանը ուշքի եկաւ, բայց տեղից չկարողացաւ շարժուիլ, լեզուն չէր դառնում, ատամները ցրտից միմեանց դիպչելով կճկճում էր։ Անգութ Մարկոսը չէր ցանկանում դաշոյնով վերջ դնել իւր գոհի կեանքին։ Նա չէր ուզում, վիրաւորել, արիւն թափել, և զանազան մարդկանց ենթարկել կասկածանքի։ Շատ չանցաւ, Սաքանի ատամների կճկճոցը դադարեց, բերանը, ատամները, աչքերը բաց, սառեց-չոր դիակ դարձաւ, հոգին աւանդեց։ Մարկոսը սառած դիակը բարձեց ձիուն, արխալուղի կոճակները քցեց, գոտիկը կապեց, փափախը դրեց գլուխը և բաշլըրով կտպեց, եափուկջան քցեց վրան և ձիուսանձը քաշելով զգուշութեամբ հասցրեց ճանապարհը, ձիու գլուխը դարձրեց դէպի Փ. գիւղը և ինքը անյայտացաւ։ Խելացի անասունը կամաց կամաց սառած դիակը մօտեցրեց գիւղին, բայց յանկարծ դիակի հաւասարակշռութիւնը կորաւ, շուռ եկաւ ձախ կողմի վրայ, մէկ ոտը կոճակի պէս պնդացաւ ասպանդակի օղակի մէջ, իսկ գլուխը հասաւ գետին։ Այսպէս ձին իւր կողքի հետ քաշ, տալով Սաքանի դիակը հասցրեց Փ. գիւղը, որտեղ բնակւում էր նրա մօրաքոյրը։ Շները սկսեցին աղմուկ անել, կլանջել, օռնալ և ձին փողոցէ փողոց փախցնել։ Շների այս տարօրինակ աղմուկից գիւղացիք դուրս թափան ձին բռնեցին։

բայց որքան զարմացան, երբ նկատեցին ձիուկողքի հետ քաշ եկող մարդկային դիակը։ Գիւղական քեօխվան պաշտօնապէս հրաւիրեցաւ ականատես լինելու։ Բոլոր գիւղացիք հաւաքեցան, դիակը ներս տարան։— Գեօխվախի յայտարարութեան համաձայն առաւօտեան շատ կանուխ քրննիչը հասաւ այդ տեղ, խօսեցրեց բոլոր ներկայ եղողներին և բոլորից էլ միւսնոյն պատասխանը ստացաւ։ Մանրամասնաբար հետազօտեց դիակը, ոչ մի հարւածի կամ վէրքի հետք չգտաւ։ Ոչընչից ոչինչ չէին տարել. արծաթէ գոտին վրան, ոսկէ մատանին, 5 ռ. փող գրպանը, խաս շորերը հագին։ Քննիչը մանրամասնաբար քննելուց լետոյ, սկսեց հետազօտել այն ճանապարհը, որտեղից ձին գիւղ էր մտել։ Ճանապարհին միայն փափախը գտան, որ հագիւ երևում էր ձիւնի տակից։ Գիշերւայ ձիւնախառն քամին այնպէս լցրել, կոկել էր ամեն բան, որ ամենեւին չէր երևում ճանապարհը։ Պաշտօնական քննութիւնից դուրս եկաւ հետեւալ արձանագրութիւնը.— «Ճանդուցեալը յանկարծ ձիուց վայր է ընկել, ոտը մնացել է ասպանդակի մէջ ու կտորվել է. ինքը մրսած է եղել, չի կարողացել շտկել, ձին խրտնել փախել է և քաշ է տուել մարդուն, որ երկար ժամանակ ցրտին ոտի կտորածին չդիմաւարով ինքն իրան սառել է։ Այստեղ աւազակու-

Թեան ոչինչ չի երևում: Աւագակը կ վիրաւորէր, ոսկէ մատանին, արծաթէ գոտին, փողը, շորերը կտանէր:

Սաքանի դիակը միայն մի մարդ ճանաչեց, դանրա մօրաքրոջ ամուսինն էր: Սրանց տան մէջ այդ օրը այնպիսի մի լաց ու կոծ էին քցել, որ անշունչ առարկաների վրայ անգամ ազդեցութիւն էին անում:

Է.

Կէս օր էր: Աբգարենց տանը սովորականից աւելի շարժում, և կենդանութիւն կար: Մէկ կողմից չիր ու բրինձ էին մաքրում, մէկ կողմից աման ու գոտայ էին հաւաքում տներից, ահագին քանակութեամբ հաց էին թխում, զանազան պատրաստութիւններ տեսնում, որովհետև հետեւեալ առաւօտը Սաքանի պակին է, բայց Սաքանը դեռ չկայ, հաշուով նա այսօր անպատճառ վերադարձած պիտի լինէր:

— Ջարմանալու բան է, ինչո՞ւ ուշացաւ, քնչ պատահեց, տրտնջում էր Սաքանի մայրը, և բարկանում իւր ամուսնու վրայ: Ել քնչ ես կայնել քնչ ես սպասում, շուտ մի ձիաւոր հասցրու ետեւից, իրան առնին գան. քոյրս երբ ուզում է թող ետեւից գայ, հասնի:

Հէնց այս րոպէիս մի ձիաւոր կանգնեց Աբգարենց դռանը և տուեց Աբգարին զաւտուպետի հրամանը, որտեղ գրած էր.—

«Այս հրամանը ստանալուն պէս, առանց մի քուպէ կորցնելու գոտ Փ. գիւղը հարկաւոր գործի համար:

— Կու Փ. գիւղից ես գալիս, հարցրեց Աբգարը ձիաւորին:

— Այո՛:

— Ճանապարհին մի ջահել տղայ և մի կնիկ— մարդ չ տեսար:

— Ոչ:

Աբգարը հագար ու մի տեսակ հարցեր տուեց, բայց ամեն անգամ «չգիտեմ, չտեսայ, ոչ» բառերը լսեց ձիաւորից: Ուստի ճարահատեալ ձին հեծաւ և ձիաւորի հետ ճանապարհ ընկաւ:

— Այ կնիկ, դուք բարեկամներին առաւօտեան կ հրաւիրէք, ուրախութիւնը կ սկսէք, ես Սաքանին շատ կարելի է գիշերս էլ հասցնեմ, սասց Աբգարը և ձին քշեց:

— Աշխատիր այս երեկոյ հասցնես, բղաւում էին ետեւից բարեկամները, որ փեսայի վերաբերեալ գործերը հոգանք:

Բ.

Լուսացաւ: Հրաւիրեալները նստած են. երկու երիտասարդներ օղի են բաժանում. դաւուլ զուռնի ձէնը ամբողջ գիւղը զղրգացնում է: Ուտում, խմում, պարում, երգում և ուրախութիւններ են անում: Տխուր են միայն շատ մօտիկ ազգականները, որոնք ամեն վայրկեան անհանգիստ սպասում են Սաքանի գալստեանը: Մինչ դեռ տանեցիք այսպիսի սպասողական դրութեան մէջ մտատանջում էին, և շուտ շուտ դուռ ու տուն անում, կամ կտուրը բարձրանում, ճանապարհներում ճանապարհորդի նայում, նորից տուն մտնում, հարցնողներին «չկայ, չեն երևում» բառերով պատասխանում, յանկարծ մի երիտասարդ շնչասպառ ներս վազեց և բղաւեց, «աչքերդ լոյս, եկան»:— Իսկոյն շատերը բարձրացան կտուրը և տեսան, որ իրաւ գալիս են, բայց շատուր են երևում:

—Այն առաջին ձիաւորը Աբգարն է, բացատրում էր մէկը, նրա աջ կողքի սպիտակ ձիաւորը

Սաքանն է. սայլի վրայ նստողն էլ մօրաքոյրն է, բայց նրանք, այն միւս ձիաւորները նվբեր են, երկու հոգի էլ սայլն են քշում, ինչքան էլ կամաց են գալիս:

Մէկ քառորդ ժամից լետոյ սայլը բաւական մօտեցաւ, այժմ ամեն բան պարզ երևում էր:

—Եղբայր, դրանց մէջ Սաքանը չի երևում: Սայլի վրայ մի բան կայ, բայց ծածկուած է. սայլը քշողը Աբգարն է, միւս ձիաւորները օտար են, մեկնում էր մէկ ուրիշը:

Ամեքի սիրտը մի տեսակ կասկած ընկաւ. մի քանիսը առաջ վազեցին, միւսները կտուրում սպասեցին: Միքանի ըոպէից լետոյ Աբգարը «վայ Սաքան ջան» գոռալով սայլը կանգնեցրեց դռանը և ինքը ուշաթափւեցաւ, դաւուլ զուռնան լռեց, ոգեւից խմիչքները անհետացան. հարսանիքատունը սգի տուն դառաւ: Սայլը փետում էր իւր մագերը, ազգականները, բարեկամները արտասուքներով թրջում էին Սաքանի դիակը:

«Վայ, բալայ ջան, ազիզ ջան, թնուլան ջան, աղիողորմ ձայնով սգում, ողբում էր մայրը և ուշաթափւում:

Ամբողջ գիւղը ներկայ էր այդ սրտամաշ և սարսափելի տեսարանին:

Ճշմարիտ է, Սոհան առաջ, քանի Մարկոսը

Չաւոյի հետ նշանւած չէր, ատում էր Սաքանին, բայց երբ Մարկոսը իւր ուխտը քանդեց և սառնացաւ, ինքն էլ մոռացաւ նրան և հաշտուեցաւ իւր նոր բաղդի հետ, և սկսեց սիրել Սաքանին, չգիտենալով Մարկոսի նշանադրութեան բուն և դաղտնի նպատակը: Այսօրուայ Սոնայի լաց ու կոծը, սուգն ու շիվանը, աղիողորմ արտասուքը անդդայ քարերին անդամ լացացնում էր:

Հետեւեալ առաւօտը, հէնց այն ժամանակ, երբ Սաքանին պսակ պիտի տանէին, տարան գերեզմանատուն, և փոխանակ Սոնայի հետ պսակելու, հոգի հետ պսակեցին:

Մի ճարտար լեզու, բեղմնաւոր գրիչ, տաղանդաւոր նկարագրիչ է հարկաւոր, որ կարողանայ սրանց սուգ ու շիվանը, այս սարսափելի տիուր հանգէսը նկարագրել: Ես հրաժարոււմ եմ, պէտք էր տեսնել ու զգալ:

Այս ցաւալի անցքից մի ամիս լետոյ եղեռնագործ տիրացու Մարկոսը վերագարձաւ զիւր, և, իբր թէ ոչինչ բանից տեղեկութիւն չունի, սկսեց կեղծ ցաւակցութիւն ցոյց տալ: Բայց որքան ուրախացաւ, երբ լսեց, որ ոչ ոքի վրայ կասկած չունին, բոլորն էլ համոզւած են, որ Սաքանը ձիուց ընկել և ցրտից սառել է:

— Ուրեմն ես հասայ իմ նպատակին, մտածում-

էր ինքն իրան Մարկոսը, գործս լաջող է: Սոնան իմ նշանածո էր և իմ նշանածը պիտի լինի: Միայն հարկաւոր է մի առժամանակ համբերել, մինչև սգաւորների սիրտը մի փոքր հանգստանայ:


Թ.

Անցաւ մի ժամանակ, բայց սգաւորների սիրտը գեռ սղբում էր, նրանց ցաւը դեռ չէր անցել. այդ ցաւին մի սպեղանի էր հարկաւոր և այդ սպեղանին զտնելու համար, երեկոյեան ճրագները վառելու ժամանակ Գոգորի նոյն սենեակում տխուր նստած էին նոյն մարդիկ, որոնք Սաքանի նշանադրութեան ժամանակ պատգամաւորներ էին եկել:

— Գոգոր աղբէր ջան, ասաց քեօրդէն, գիտէս ինչ կայ, քեզ շատ լաւ յայտնի է քո խնամի Աբգարի տան սուգ ու շիվանը, քեզ լայտնի է, որ ահա 8 ամիս է զրոսք ողբում: Ենթե անու՛մ: Այժմ մենք, ձեր ոտքերը ընկած աղաչում ենք, որ դու քո բարեկամի տանից այդ սուգը, այդ լաց ու կոծը վերջացնես:

Ասացէք, քեօխօյ ջան, ասացէք, հրամայեցէք՝ ես ամեն լուպէ պատրաստ եմ ձեր հրամանը կատարելու, պատատխանեց Գոգորը:

— Զեր աղջիկը-Սոնան Աբգարի հարնանցուն



էր, բայց Աստուած չկամեցաւ, այժմ խնդրում ենք որ դարձեալ նրա հարսը լինի: Մենք կամենում ենք, որ Սոնային պսակենք Սաքանի փոքր եղբօր-Տեփանի հետ, բացատրեց քեօխվան:

— Ես իմ աղջիկը մի անգամ տուել պրծել եմ, ասաց Գոգորը, էլ իրաւունք չունիմ: Սոնան Աբգարի հարսն էր, հիմա էլ նրա հարսը պիտի լինի և մինչև մահ էլ նրա հարսը պիտի լինի, ում հետ ուզում է, թող պսակէ:

— Եստ և շատ շնորհակալ ենք, լացակումած ասաց Աբգարը. ինչպէս որ դու այսօր քո բարե-սրտութեամբ ցանկացար մեր վիրաւորած սիրտը մխիթարել, մեր հարսնացուն կրկին մեզ բաշխել, Աստուած էլ իւր օրհնութիւնը, իւր խնամքը անպակաս անի քո տանից:

— Եստ լաւ կ'լինէր, որ խնամի Նանագիւլն էլ այս տեղ լինէր, Սոնային էլ խօսացնէր, նրանց համաձայնութիւնն էլ առնէինք և ըստ այնմ գործերս կարգի դնէինք, ասաց կնքահայրը:

— Ինն, գործերդ սրտիդ ուզածին պէս կարգի դիր, մենք պատրաստ ենք: Կնիկը, աղջիկը քնչէ, քնչ իրաւունք ունի տղամարդու գործերի մէջ խառնուելու: Ես այժմ քեզ խօսք տուեցի, միթէ իմ կինը իրաւունք ունի իմ տուած խօսքը իւր ոտների տակ քցել: Հասլա էլ ինչու ես փափախ

եմ դնում. նա լաչակով ծածկում իւր գլուխը, վիրաւորում պատասխանեց Գոգորը:

— Մի բան էլ խնդրեմ, ասաց Աբգարը. այս նշանադրութիւնը թող գաղտնի մնայ մեր մէջ. թող հրատարակուի միայն այն ժամանակ, երբ պսակ կ'տանինք: Եստ չենք ուշացնէ, ամեն բան պատրաստ է. երեք օրից յետոյ պսակենք վերջացնենք:

— Երբ կամենաք, կարող էք, ես պատրաստ եմ. ասաց Գոգորը:

Նշանադրութիւնը գաղտնի պահեցին այն պատճառով, որ Աբգարը հասկացել էր Մարկոսի գիտաւորութիւնը, լսել էր որ Մարկոսը մտադիր է առաջարկութիւն անելու, Սոնային ուզելու: Ճիշտ տեղեկութիւն չունէր, բայց խուլ անկիւններում մի այդպիսի քչիչոց լսում էր:

Երեք օրից յետոյ շատ անշուք կերպով, տանուց տանու պսակեցին Սոնային Տեփանի հետ: Թէև անգօր օրիորդը շատ ողբաց, աղաչեց, իւր հօր ոտքերը լիզեց, ուշաթափւեցաւ, բայց գթութեան դռները փակ էին, խղճերը քնած. մարդասիրական զգացմունքները թմրած, ոչ ոք չէր լսում. ընդ հակառակը ամեքն էլ ծեծելով. մագերը պոկելով տարան եկեղեցի պսակեցին և յետ բերին: Սոնան չէր ուզում Տեփանին երկու պատ-

ճառով. նախ՝ Մարկոսի մտադրութիւնը լսել էր, երկրորդ՝ Տեփանը մի տղեղ, անճոռնի կազմուածքով անգուր երիտասարդ էր:

Ժ.

Սոնայի պատկմանից 5 օր յետոյ Մարկոսը վերադարձաւ գիւղ Սոնային ուղելու առաջարկութիւնը անելու զիտաւորութեամբ, բայց գիւղ մտնելուն պէս կարծես կայծակնահար եղաւ, երբ լսեց Սոնայի պատկը:

— Ա՛խ, անգութ, անասուած մարդիկ, ատամները կրճտացնելով մրմնջում էր կատաղած Մարկոսը: Անխիղճ մարդիկ, վերջը ձեր ասածը կատարեցիք. հապա՛ս էլ ինչո՞ւ Սաքանին միւս աշխարհը ուղարկեցի, երբօր ես իմ նպատակին չպիտի հասնէի: Կնշանակէ, Սոնային Սաքանի պէս տղամարդի ձեռքից ազատեցի, Տեփանի պէս այլանդակ մարդու ձեռք քցեցի և Սոնայիս անբաղդութիւնը բազմապատկեցի: Անկարելի բան է, վերջ իվերջոյ, ինչ ճանապարհով էլ որ լինի, Սոնան իմ կիներ պիտի լինի:

— Մինչ դեռ Մարկոսը այսպէս մոլեգնաբար վճիռներ էր կալացնում, ներս մտաւ նրա հայրը՝ Թորոսը և սկսեց սովորական խրատները.

— Սյորդի, բաւական չէ՞ մեզ, չարչարես, բաւական չէ մեզ խայտառակես, համարեայ երկու տարին լրանում է, որ ինքդ քո կամքով նշանել ես, ուրիշի աղջկայ ոտը կտայել ես և չես պահւում. արք միտքդ ի՞նչ է, մի պարզ ասա, հասկանանք, էլի՛:

— Իմ միտքս այն է, որ ես սխալւած եմ, Ջաւոյին պիտի թողնեմ, էլ չեմ ուզում; ասաց Մարկոսը:

— Ի՞նչ պէս թէ պիտի թողնիս: Կնշանակէ դու ուզում ես ամբողջ գիւղի մէջ մեզ խայտառակէս. մեզ կենդանի սպանես. հա՛:

— Ձեզի հետ ինչ գործ ունին, ուզողը ես, թողնողը ես, հաշիւ ունին, թող ինձ հետ տեսնես:

— Ախր ինչո՞ւ, պատճառը ինչ է, դու հաւանեցիր, դու գովեցիր, դու ուղեցիր, հիմայ ինչ ես իմացել:

— Այն եմ իմացել, որ բոլորն էլ այդ աղջկայ համար ասում են անտանելի գլխացաւունի, շարաթը մէկ անգամ բռնում. հինգ-վեց օրով ուշաթափ մնում է: Ասում են չափազանց անզգամ է, վերջապէս ասում են անտանելի աղջիկ է, հնարեց իրանից Մարկոսը:

— Դրանք բոլորն էլ թշնամու զրպարտութիւններ են, և մենք մինչև հիմայ այդպիսի բան չենք լսել: Այդ աղջիկը երկու պակասութիւն

ունի. առաջինը շատ մեծ է, երկրորդը տղեղ: Այդ պակասութիւններն էլ դու ինքդ աչքով տեսնում էիր, և ասում, թէ ինձ սիրուն կնիկ Հարկաւոր չէ, ինձ տնարար կնիկ է Հարկաւոր:

— Ինչ կուզի լինի. 15 Հազար տարի էլ որ խօսիք, ի զուրէ, ես այդ աղջկայ Հետ պսակողը չեմ. բարկացած վճռեց Մարկոսը:

Գլուխդ քննը կտաս, երեսդ արնտը. որ չես պսակւի, ճչաց Թորոսը, ուզում ես, մեզ քցես անշիջանելի կրակի մէջ, էլ կազատւի՞նք Ասլանի ձեռից:

Այս ճչոցի վերայ ներս վազեց մայրը և սկսեց նախատել, —

«Ամօթ է, ամօթ, քնչ էք զալմաղալներդ աշխարհք քցել:

— Ախր քնչ անեմ, զալմաղալ չանեմ, մարդի քաջքերը եկել են, ասում է, էլ պսակւելու չեմ, թողնում եմ. սա խիղճ է, մարդավարութիւն է, ում երեսը կբռնէ, որ գնայ Ասլան աղին իմաց տայ:

— Վոյ, Հողը գլխուս, զարմացած բացականչեց Սանամը, քն տղայ, խելքդ կորցրել ես, երկու տարի է գնում գալիս էիր, աղջկայ անուներ քեզի Հետ Հանեցիր, Աստուած չունի՞ս, որ

Թողնում ես:

— Ես ասացի, դժոխքը կգնամ, կխեղդվիմ և Ջաւոյի Հետ չեմ պսակւի, այժմ ինչ ուզում էք, դուք ասացէք:

— Լաւ, որ այդպէս է, բեր մարդի 300 մանէթը պատրաստիր, տանենք տանք իրան և յայտնենք, որ էլ չես աւնում, ասաց Թորոսը:

— Ի՞նչ 300 մանէթ:

— Ի՞նչպէս թէ քնչ 300 մանէթ: Ասլան աղէնքո նշանադրութեան օրը 300 մանէթ նաղտ փող չէ տուել, առանց փողի խոմ չէ՞նք ուզել այդ աղջիկը:

— Ով որ ստացել է այդ փողը, թող նա էլ վճարէ, ինձ ինչ. ինձ մի կուպէկ տուել է:

— Քեզ չէ տուել, մեզ է տուել, այ բեմուրատ, անիծեց մայրը. Եւր քնչ ջուղապ տանք մարդուն, մենք Ասլան աղի Հետ կարող ենք գլուխ ելնիլ: Վաղը կգայ, դուռը կկտրէ, մալ ոչխար, եղած չեղած կը տանի կը ծախէ, է . .

— Ինչ ուզում է անի, իմ գործը չէ. բարկացաւ Մարկոսը և դուրս ելաւ:

— Ը գետինը մանիս, Աստուծոյ կրակին գաս, օղնւլ, անիծեցին ծնողները և ընկան մտատանջութեան մէջ:

ԺԱ.

Նրեկոյեան կրակները վառուում էին: Ասլան աղէն չափազանց զայրացած էր:

— Գիտես, ինչո՞ւ եմ կանչել քեզ, խնամի՛ Թորոս:

— Չգիտեմ պատասխանեց Թորոսը, բայց տեսնելով Ասլան աղի կրակոտ աչքերը և կատաղած դէմքը, Հասկացաւ, թէ ինչ է լինելու:

— Բո պարզերես աղէն այսօր տեղեկութիւն է ուղարկել ինձ, թէ էլ ձեր աղջիկը չեմ առնի»: Այժմ քեզ եմ Հարցնում, էդ քրիստոնէութիւն է. խի՞ղճ է, ասուածպաշտութիւն է: Մօտ երկու տարի է նա իմ տունը գնաց, եկաւ, իմ աղջկայ պարկեշտութիւնը ոչնչացրեց. Հիմի ո՞չ կի՛ն է, ո՞չ աղջիկ, չէ՞ որ դա մարդասպանութիւն է, էլ ո՞վ կառնի այդ աղջկան:

— Ի՞նչ ասեմ, աղայ ջան, թի՛նջ անես, իրաւունք ունիս, թէ ինձ սպանես, կրակը տաս, մեր տունը այրես, իրաւութիւն չունինք ձայն, ծրար տուն Հանելու: Բայց որ չենք կարողանում էդ անզգամին խօսք Հասկցնել, թի՛նջ անենք:

— Շատ լաւ, դուք չէք կարողանում խօսք Հասկացնել, բայց ես կարող եմ. ես ձեր ասած խեղճ մարդկերանցից չեմ, և ինձ Համար շատ

ամօթ է, եթէ ձեզ պէս մարդկանց ձեռին էլ խեղճ լինիմ: Վաղը առաւօտեան վաղ ինձ կ' Հասցնես իմ 300 մանէթը, եթէ ոչ՝ ամեն բան ձեր գըլխին քար ու քանդ կանեմ, զայրացած ասաց Ասլան աղէն և, առանց պատասխանի սպասելու, իսկոյն ձին Հեծաւ, զնաց քաղաք:

Այցելեց գաւառապետին, Հայոց Առաջնորդին, Հարկաւոր ծախքերը Հոգաց, բոլորի բերանը անուշացրեց, ամեն տեսակ պատրաստութիւն տեսաւ և երեք օրից լետոյ վերադարձաւ դիւր:

ԺԲ.

Այս դէպքից երկու օր լետոյ, Մարկոսի ձեռքերը լետեր կատարած ներկայացրին գաւառապետին: Գաւառապետը, մի քանի Հարցեր տալուց լետոյ, ուղարկեց բանդը: Մէկ ամիս Մարկոսը մնաց բանդում, և ամենայն լամառութեամբ Հաստատ մնաց իւր վճռին: Մէկ ամսից լետոյ Գաւառապետը յայտնեց Մարկոսին Հետեեալ տեղեկութիւնը.

Ա. Բոլոր գիւղացիք, նոյն իսկ քս ծնողները վկայում են, որ այդ աղջիկը ոչ մի տեսակ հիւանդութիւն չունի, կատարեալ առողջ է: Բ. գումբողջ երկու տարի գնացել եկել ես աղջկայ մօտ, և ինչպէս ցոյց է տալիս բժշկի վկայականը

նրա պարկեշտութիւնը դու ոչնչացրել ես: Մենք այս գործի բոլոր արձանագրութիւնները, եթէ ուղարկենք Հաշտարար դատաւորին, անպատճառ քեզ կուղարկեն յաւիտենական աքսոր: Երկու օր քեզ ժամանակ, մտածիր և մեզ պատասխան տուր...:

Մարկոսը ընկաւ անելանելի գրութեան մէջ, նրան ոչ ոք չէր օգնում, ամենքն էլ մեղադրում և նախատում էին: Սուլան աղէն էլ Թորոսից օրինաւոր բարաթ առաւ 300 մանէթի, որ մի ամսից յետոյ ստանայ: Գողն ընկել էր Թորոսի ջանը, ողորմելին չէր իմանում ինչպէս ազատել Սուլան աղի ճանկերից. մի ամսից յետոյ եղած չեղածը ծախի, գեռ չի կարող պարտքից ազատելի: Ճարահատեալ գալիս էր քաղաք, նստում բանդի լուսամուտի առաջ և ժամերով խրատում, աղաչում, արտասուում և նորից վերագառնում գիւղ:

— Սիպիր գնալը ինձ Համար Հազար անգամ քաղցր է, քան Զաւոյի Հետ պսակելը: Բայց մէկ բան կայ. Սիպիրը կարող է յաւիտենական լինի, իսկ Զաւոյի Հետ պսակուելը՝ ժամանակաւոր: Ուրեմն աւելի Հեշտ է և ձեռնտու վերջին պատիժը ընդունել, Հօրս ազատել Սուլանի ճանկերից և յետոյ շատ Հեշտ է մի կնիկմարգ

միւս աշխարհը ուղարկել, մտածում էր Մարկոսը:

Երկու օրից յետոյ դատաւորը, լսելով Մարկոսի Համաձայնութիւնը, կանչեց նրա Հօրը և Սուլան աղին, Մարկոսին Հաշտեցրեց նրանց Հետ և պատուիրեց իսկոյն պսակել:

Սուլանը շատ ուրախ էր իւր յաղթութեան վերայ, այդ պատճառով իւր խորին շնորհակալութիւնը յայտնեց գաւառապետին և խորտացաւ այդ լաւութիւնը առանց ուշադրութեան չթողնել:

Գատաւորը, կասկածելով, թէ մի գուցէ Մարկոսի Համաձայնութիւնը կեղծ լինի և բանդից դուրս գալուց յետոյ փախչի, կարգադրեց ձիաւորներով տանին գիւղ և մինչև պսակի վերջը նոյն Հսկողութեան տակ պահեն:

Այդպէս էլ արին. քաղաքից գիւղ տանելուն պէս ամենախիստ Հսկողութեան տակ պսակեցին և ամեն բան վերջացրին. բայց նրա սրտի ոխը աւելի կատաղացրին: Մարկոսը պսակման օրից գիշեր ցերեկ մտածում էր, Հազար ու մի տեսակ ծրագիրներ էր կազմում Զաւոյից ազատելու համար, բայց ոչ մէկն էլ չէր յաջողում: Նա աշխատում էր ստեղծել սպանման այնպիսի մի ձև, որ իւր վրայ ոչինչ կասկած չերևար:

ԺԳ.

Անցաւ երկու տարի: Գիշեր էր: Ա. քաղաքից քիչ հեռու մի քարքարոտ դաշտավայրի վրայ բազմած էր Հ. գիւղը իւր խարխուլ և գետնափոր խրճիթներով, իւր օձապտույտ և գարշահոտ փողոցներով: Գիւղական ժողովուրդը ցերեկուայ աշխատանքից խոնջացած մրափում էր Մորփէտսի գրկում: Լսվում էր միայն հովասուն գեփիւռի հանդարտ սլսլոցը և գիւղի միջից արշաւող առուակի զուրեկան կարկաշիւնը: Երբեմն երբեմն խոտնոցների վրայ պարկած զամբուները իրանց խռպոտ վայրահաչուցումը խանգարում էին գիշերային խաղաղութիւնը և յետոյ դունչները զննելով բրդոտ պոչերի տակ, կոլոլում, խոտթում էին, տեղի տալով թագաւորող լուսթեան:

Այս ժամանակ ամբողջ գիւղի մէջ միայն մի խրճիթում դեռ վառվում էր առկաջծեալ ձիթի ճրագը և իւր աղօտ ճառագայթներով հագիւ լուսաւորում էր խրճիթի մրոտ պատերը: Ճրագի լոյսի տակ, մտախոհութեան մէջ խորատուզած մի երիտասարդ կարկատում էր ալիւրի ջուալները: Նրա մայրը անտանելի հիւանդութեան մէջ անկիւնում ընկած տառապում էր. հայրը 10 օր առաջ տնական գործի համար հեռացել էր գիւղից, իսկ

կինը տեղաշարի մէջ նստած գիշերային հագուստով մի տարեկան երեխային էր օրօրում:

— «Քո, կէս գիշեր դառաւ, ձէթ էլ չունինք, քանի վառես, վեր կաց քնիր, էլի, ասաց կինը մի փոքր նեղացած:

— Ելի լեզուդ հանեցիր, էլի սատանի ձէնդ ականջս քցեցիր: Ես քնիմ, դու քնիր, հապա էս անտէրները ո՞վ կարէ, ջրաղաց ո՞վ գնայ: Հնրամ լինի կերածդ հացը. քոռ աչքերովդ տեսնում ես, որ քո գործն էլ ես եմ անում: Սյօսր քանի անգամ կրկնեցի թէ ջրաղաց պիտի գնամ. հին ջուալները պիտի կարկատւի. խուլ ականջներդ իմացն, պատասխանեց զայրացած տղամարդը:

— Լաւ, էլ ինչու ես բարկանում, գնում ես, գնա, ջրաղացը ոտով գլխով քեզի լինի: Ահա վեց դիշեր է դու ջրաղաց ես գնում, այդքան ալիւրը կ'նչ պիտի անես, մարդ չի հասկանում, ակնարկութեամբ պատասխանեց կինը:

— Չգիտէս ինչ պիտի անեմ: Յոյս Սատւած, քեզ պէս լիրբ և անգգամը շուտով սատկելու է, հոգու հացի պատրաստութիւն եմ տեսնում. ուրախութիւն պիտի անեմ, որ քեզանից ազատուայ:

— Ինչանից ազատուիս, այնպէս մէկ կրակի մէջ ընկնիս, որ, ով որ իւր մեռելը լայ, դու նստիս քո սաղը լաս:

—Թող քեզանից ազատւիմ, թէ կուզ դժոխքը գնամ, հուր կրակի մէջ այրւիմ. դարձեալ ինձ համար փառք ու ուրախութիւն է:

—Լաւ, լաւ, գնա՛, ջրաղացդ գնա՛, ուշացար, հիմի ջրաղացսանք ճանապարհդ սպասելով աչքերը դուրս եկաւ: Գնա՛, ես շատ լաւ եմ հասկանում, թէ քո ջրաղացը սրտեղ է

Այս փոխաբերական ակնարկութիւնից սաստիկ զայրացած, կատաղաբար արձակւեցաւ տղամարդը իւր լանդուզն կնոջ վրայ և սկսեց բռնուցքի ուժգին հարուածներ կարկտի պէս թափել անպաշտպան գոհի գլխին, քամակին, կուրծքին, կողերին, աչքին, բերնին, երեսին, և վերջապէս ամեն տեղ:

—Սրտեղ է իմ ջրաղացը, գոռում էր դադանացած երիտասարդը և խբում. սրտեղ է սրտեղ, սրտեղ, սրտեղ

Այնքան թակեց, մինչև կինը ուժից ընկաւ, քինթ ու բերան արիւնոտ ուշաթափ փռուեցաւ լատակի վրայ: Հիւանդ մայրը ձեռքերով թոյլ շարժուածքներ էր անում, իսկ երեխան օրօրոցի մէջ լալիս ճչում էր: Այս տեսարաններից ոչ մէկը տղամարդի գուժը չշարժեցին. նա իւր վայրենացած կրքերին բաւականութիւն տալուց լետոյ, իսկոյն դուրս եկաւ տանից և անյայտացաւ մթութեան մէջ և պատերի ստուերների մէջ ծածկուած, կուզէ կուզ գնալով, կանգնելով ու տափելով մօ-

տեցաւ մի խրճիթի դռան, և երկու անգամ խորհրդաւոր կերպով խբեց դուռը: Իսկոյն խրճիթի դուռը բացւեցաւ և Սոնան ու Մարկոսը մթութեան մէջ գրկախառնուած ներս մտան:

ԺԴ.

Սոնայի կեսուրն ու կեսրաբը չկարողանալով գիմանալ իրանց անբուժելի վշտերին, Սաքանի մահուանից լետոյ, շատ կարճ միջոցում վախճանւել էին: Իսկ Տեփանը գիւղացոց հետ սալլով գնացել էր անտառը փայտի և վեց օրից լետոյ պիտի վերադառնար. ուրեմն ոչ ոք չէր կարող խանգարել երկու վաղեմի սիրահարներին, որոնց մէջ սիրահարութեան կալծը քանի գնում բորբոքում ու կատաղում էր:

Տիրացու Մարկոսը և իւր տարփածուհին երկար ժամանակ մթութեան մէջ գրկախառնուած փայփայեցին միմեանց, միմեանց կեանքի մատաղ եզան և ամենասարսափելի երդումներով ու անէծքներով իրանց ուխտն ու պայմանը նորոգեցին, սէրը բորբոքեցին, և անուշ խօսքերով, քաղցր համբուրներով միմեանց սիրաշահեցին:

«Ձէ, Սոնա ջան, այսպէս գաղտագողի ճանապարհներով մենք միմեանց բաւականութիւն չենք կարող տալ: Շատ անգամ ամբողջ ամիս-

ներով մենք միմեանց չենք կարողանում տեսնել, երբեմն էլ հազիւ ազատոււմ ենք փորձանքներինց պետք է հնարը գտնել:

— Ես թնչ անեմ, Մարկոս ջան, հազար անգամ դու այդ խօսքերը ինձ ասել ես: Ասում ես, ասում, բայց մի բան զլուխ չես բերում:

Ինչ որ անելու ես, արև, քեզի հետ ապրելու քեզի հետ մեռնելու ես միշտ պատրաստ եմ: Ազատիր ինձ այդ սատանի ձեռքից:

— Մեղաւորը դու ես. չտեսնո՞ր այդ սատանի կուտուղ բոլը, ծուռ սաները, քամակի կուզը, ճւղտ աչքերը, վարունգի չափ քիթը, ժանգոտ ստամոքսները, ինչո՞ւ առար, ինչո՞ւ պսակւար հետը:

Իհ, թնչ ասեմ, սաղ գեղը, աղջիկ, տղայ, հարս ու կնիկ, ծեր ու պառաւ, գատաւորներ, ազգականներ, . . . բոլորը, բոլորը թափել էին զլխուս, որը ձեծում էր, որը չարչարում, որը անհիծում, որը հայհոյում, որը խրատում, որը աղաչում, որը երկիւղ տալիս և վերջապէս չւանք բուկա զբաժ խեղդում էին: Ինչքան ճչացի, աղաչեցի, սրա, նրա ոտքերը լիղեցի, հնար չեղաւ, օգնող ամենեւին չկար, թնչ կարող էի անել սաղ զիւղի դէմ:

— Անցեալը անցել է, Սոնա ջան, ինչքան դու քո զարշիլի Տեփանից ես զգուած, տասն

այնքան ես Ջաւայից: Ես սիրում եմ քեզ, դու սիրում ես ինձ, բայց թնչպէս անենք, որ ազատ սիրենք միմեանց և արգելքներին չհանդիպինք:

— Այդ այն ժամանակ կլինի, երբ Ջաւոն ու Տեփանը միւս աշխարհը կգնան, և մենք կպսակւինք իրար հետ:

— Ե՞րբ:

«Երբոր մենք մեր ուխտի վրայ հաստատ կլինինք և մեր գաղտնի մտազրուծիւնը զլուխ կբերենք:

— Ես այդ ուխտի վրայ հաստատ և պատրաստ եմ:

«Ես էլ:

— Երկու մոլեռանդ սիրահարները իրանց պայմանը անէծքներով, երդումներով կրկին ու կրկին հաստատելուց յետոյ, սկսեցին մտածել իրանց կատարելիք եղեռնագործութիւնը զլուխ բերելու ձևի ու ծրագրի վրայ:

Թող սրանք մտածեն, թող կազմեն չարագործութեան ծրագիրը, իսկ մենք վերագառնանք գէպի Ջաւոն, տեսնենք թնչ է անում:

ԺԵ.

Ջաւոն մի ամբողջ ժամ ուշաթափւած մնալուց

յետոյ, կամաց կամաց սթամբուլեցաւ, սկսեց լալ, ճչալ, աղաղակել և այդպէս դռոււմ գոչիւնով, գլխաբաց, գզգզած մագերով, արիւնաշաղախ դէմքով բարձրացաւ կտուրը և այնտեղ սկսեց իւր սուգ ու շիվանը:

Գիշերապահները, լսելով այդ տարօրինակ աղաղակը, շնչասպառ հասան օգնութեան, կարծելով թէ աւազակները մի տեղ կողոպտեցին: Բայց տեսնելով որ այր ու կնոջ պատերազմէ, նախատեցին Ջաւուին և տուն տարան:

— Աւա, բաւական է, անզգամութիւն մի անիր, մարդդ է, կճեծի էլ, կուզի էլ, իհարկէ մի բան արել ես, որ ճեծել է, էլ ի՞նչ ես բարձրացել կտուրը և գոմշի պէս գոռգոռում, ասաց գիշերապահներից մինը:

— Աւա, ճեծեց, ճեծեց, էս կէս գիշերին ինքը ուր գնաց, հարցրեց երկրորդ գիշերապահը:

Ջահանգանը գնաց, որ էլ չվերադառնայ, ողբալով պատասխանեց Ջաւան, իւր սիրական զանջղի մօտ գնաց, ուր գնաց:

— Ի՞նչ սիրական, ի՞նչ զանջղ, հետաքրքրեցան գիշերապահները:

Ջաւան պատմեց դործի մտնրամասնութիւնը և աւելացրեց. — «դէ այժմ ետեւիցս եկէք, եթէ այնտեղ չեղաւ, թքէք երեսիս»:

Գիշերապահները իսկոյն վագեցին քեօխվի մօտ, արթնացրին նրան, պատմեցին պատահած անցքը և օգնութիւն խնդրեցին: Քեօխվի կարգադրութեան համաձայն վեր առան հետները մի քանի կորիճ երիտասարդներ և Ջաւուի առաջնորդութեամբ հասան Սոնայի դռան, և շրջապատեցին դուռ ու երդիկ:

Մինչդեռ Սոնան ու Մարկոսը վերջնական վճիռ էին կայացնում Ջաւուի և Տեփանի կեանքը ջնջելու, լսեցաւ դրսի աղմուկը. և իսկոյն գլխի ընկան, որ վտանգի մէջ են: Ճշմարիտ է տիրացու Մարկոսը մի լանդուզն և անվեհեր երիտասարդ էր, մանաւանդ եթէ գէնք ունենար ձեռին, բայց տարաբախտարար մի մահակից աւելի ոչինչ չունէր: Երկար ժամանակ դուռը բաղխեցին, բացող չեղաւ, երդկից ձայն տւեցին, միայն Սոնայի լացի ձայնը լսեցին: Վերջը գիշերապահները դուռը կտրեցին, և հրացաններով, դաշոյններով, մահակներով, կրակները վառած ներս թափան:

Մարկոսը կատաղած վագրի նման յարձակեցաւ իւր հակառակորդների վրայ, սկսուեցաւ կատաղի կռիւր: ձիչ, աղաղակ, աղմուկ, լաց խառնուաւ իրար, բազմութիւնը շատացաւ, և վերջապէս տիրացու Մարկոսը ձերբակալուեցաւ: Ձեռքերը ետեւ կապած, չուանը բուկը դրած տարան

քեօխլի մօտ: Այս ժամանակ Ջաւոն իւր արձու-
 ճանկերով բռնել էր Սոնայի երկար մագերից և
 քաշ էր տալիս տան մէջ. և այնպէս էր ճղճղաց-
 նում, որ կարծես խողեր էին մորթտուում: Ջա-
 ւոն, Սոնային լաւ թակելուց լետու, ամբոխի ետե-
 ւից հասաւ քեօխլի տունը այն ժամանակ, երբ
 Մարկոսին կապել էին սնից և հազար ու մի տե-
 սակ սրախօսու թիւններով ծաղրում և թքում էին
 երեսին:

Դէ, այժմ ասան, տեսնիմ, տիրացու Մարկոս,
 հեգնելով ասաց կատաղած Ջաւոն. ամեն օր այդ
 ջրաղացն էիր գնում. ո՛ւր է քո ալիւրի ջուալ-
 ները . . . Ը, գետինը մտնի քեզ պէս տղամար-
 դը, չանչ արեց ու դուրս ելաւ: Բարձրացաւ
 ընդհանուր ծիծաղ:

Ժ. Զ.

Լուսացաւ: Օրը կիւրակի էր: Ոսկեգոյն արե-
 գակը իւր արծաթափայլ ճառագայթները շոալ-
 լաբար սփռել էր երկրի վրայ: Բոլոր գիւղացիք
 մեծ ու փոքր այդ օրը ստի էին կանգնած: Կտուր-
 ների, պատերի գլուխը ասեղ քցելու տեղ չկար:
 Ամբոխը սարսափելի հետաքրքրւած ու լարւած
 գրու թեան մէջ աչքերները բևեռել էին այն կող-
 մը, որտեղից պիտի գուրս գար հանդէսը: Զուռ-

նաճի Թաթոն թշերը ուռեցրած ածուս էր մի
 ծանր ու հանդիսաւոր եղանակ: Գզիր Օհանը
 զգզգուած, խայտաբղէտ մուշտակը թարս հագած,
 գլուխը փալասներով ու բոժոժներով սարքած,
 երեսը ալիւր քսած, մէկ իշի ջիլաւ բռնած դուրս
 եկաւ քեօխլի տանից, մէկ ուրիշ էշ էլ առաջինի
 ետեւից կապած: Առաջին իշու վրայ մրտտ երեսը
 գէպի պոչը՝ նստեցրել էին տիրացու Մարկոսին,
 ներքեւից իշու փորի տակ ստքերը իրար կապած.
 Իսկ ձեռքերը ետեւից: Երկու ուժեղ երիտասարդ-
 ներ էլ իշու կողքերը անցած Մարկոսի կռներից
 պինդ բռնած, հետը գնում էին: Միւսնոյն ձևով
 ետեւի իշու վրայ նստացրել էին Սոնային:

«Աչքերդ լնչս, գոռում էր այլանգակ շորերի
 միջից իշի ջիլաւը քաշող գզիր Օհանը, այսօր
 Սոնա խանումը և Մարկոս աղէն իրանց մուրա-
 գին հասան, տառուր սրանց ճանապարհով գնա-
 ցողներին:

— Կեցցէ Սոնա խանումը, կեցցէ Մարկոս
 աղէն, ուռան ուռան» աղաղակում էին իշի ետե-
 ից գնացող բազմաթիւ ջահել ջուհուները:

— Բարով, հազար բարի, Սոնա խանում, Մար-
 կոս աղայ, ծաղրում էին պատերի գլխից շատերը:

Ով հոգեբան է, միայն նա կարող է երևա-
 կայել մուրը երեսը քսած, իշի վրայ նստած խա-

նուժի և աղային ներքի յուզմունքը, վրդոված
 ալեկոծութիւնը, կատաղած կիրքը, բորբոքած
 գայրութիւնը, որոնք երկրի կեղևի տակ թաքնուած
 հրաբուխի նման կամենալով դուրս ժայթքել, դող-
 դողացնում էին ամբողջ մարմինը: Երկու խայտա-
 ուակած գոյգերը ճշում, լաց լինում, աղաչում,
 չարչարում, իշից վայր ընկնելու փորձեր էին
 անում, յետոյ անիծում, հայհոյում, օգնութիւն
 խնդրում, և վերջապէս ներքին կատաղի յուզ-
 մունքից ուշաթափում, թուլանում, անզգայա-
 նում էին: Կոպիտ ամբօխի բարոյականութիւնը
 վիրաւորուած, հասարակութեան մարդասիրական
 բոլոր զգացմունքները բթացել-սառել էր, ոչ մի
 տեսակ լաց ու պաղատանք չէր ազդում, չէր
 խղճահարում դրանց:

Շատ գիւղերի նախնական սովորութիւնն էր,
 այսպիսի աններելի անբարոյականութեան մէջ
 բռնուած յանցաւորներին անպատճառ իշի վրայ
 նստեցնել և հրապարակաւ խայտառակել, որպէս
 զի այս սարսափելի պատիժը տեսնողները չհա-
 մարձակւէին ուրիշի ընտանիքի պատւին ծուռ
 աչքով նայելու:

Տիրացու Մարկոսը ճշմարիտ է, արժանի էր
 այս անտանելի պատժին, բայց Սոնայի վերաբե-
 րութեամբ ժողովուրդը անգութ վարեցաւ. նա

անսուակ կին չէր, այլ մի վառ սիրոյ գերի էր:
 Նա ուխտել էր Մարկոսին նուիրելու իւր սէրը,
 իսկ այժմ ուխտագանց գտանւելու քաջութիւն
 չունէր. նա չէր համարձակում դուռնանել
 իւր խոստումը, մանաւանդ որ Մարկոսն էլ ան-
 դադար դռնում էր նրա սէրը, միշտ բորբո-
 քում և չէր թող տալիս հանգչելու:

Երեք անգամ այդ խայտառակ հանգէսը գիւ-
 ղի չորս կողմը շրջագայելուց յետոյ, բաց թողին
 անբարոյական գոյգերին, որոնք ամեքը մի կողմ
 փախչում էին ճիշդ այնպէս, ինչպէս կփախչին
 երկու մուկ, որոգայթի միջից դուրս թռչելիս:

Իսկ ամբօխը նրանց ետեից որոտագին աղա-
 դակներով գոչում էր յըն, յըն, բռնէք, բռնէք. . .

ԺԷ.

Այս խայտառակ անցքի վատ տալաւորութեան
 տակ Սոնան ստացաւ մի մաշող հիւանդութիւն.
 Իսկ Մարկոսը ոտով գլխով անյայտացաւ գիւղից.
 Ջաւոն իւր փոքրիկ երեխայի հետ մեծ մասամբ
 հօր տանն էր լինում: Իսկ Տեփանը անտառից
 վերադառնալիս, երբ լսեց իւր կնոջ խայտառակու-
 թիւնը, դառաւ նրա համար ամենակատաղի թըշ-
 նամի. ամեն օր մի դատարկ առիթ ստեղծելով,

կսկսէր անգլթարար թակել և մերձ իմահ թող-
նել հեռանալ: Մարկոսի գիւղից անյայտանալուց
լեօսյ, ամբողջ տան աշխատանքի ծանրութիւնը
մնացել էր արդէն հասակները առած Սանամի
և Թորոսի վրայ, որոնք ամեն բոլորէ անիծելով
իրանց անառակ որդուն, միշտ ցանկանում էին
նրա մահուան լուրը լսելուն:

ԺԸ.

Անցաւ մի ամբողջ տարի, դեռ Մարկոսից
տեղեկութիւն չկար: Գիշեր էր: Գիշերալին ոսկե-
շող թագուհին իւր գեղածիծաղ ճառագայթնե-
րով ցերեկի պէս լուսաւորում էր շ. գիւղը: Բոլորը
քնած էին, իսկ գիշերապահները, քները փախց-
նելու համար, սկսել էին մի անուշ եայլի.— «էս
գիշեր լուսնեակ գիշեր, կռնկներ կարմիր թշեր,
խապար տարէք իմ եարին, թող սպասէ էս գիշեր:»
Երիտասարդ պահապանների անուշ ձայնից
արդէն տների մէջ զարթել էին հասած գեղջկու-
հիները և շուռ ու մուռ էին գալիս տեղաշու-
րի մէջ:

Լուսնի դրաւիչ տեսքը, պայծառ ճառագայթ-
ները և երիտասարդների անուշ եայլին գուր
չէր գալիս միայն մի օտարականի, որ այդ բո-
լորէին, արիւնարբու աւազակի պէս, ըստ ամենայնի

ղինւորուած, մտել էր մի մութ ստուերի մէջ և
անհամբեր սպասում էր լուսնի չքանալուն և
պահապանների լռելուն: Օտարականի համար այդ
բոլորէին ատելի էին լոյս, ճշմարտութիւն և
արդարութիւն: Նա սիրում էր խուար գիշեր,
և մտածում էր իւր կատարելիք եղեռնագործու-
թեան վրայ: Հակառակի պէս այդ գիշեր կարծես
լուսինը աւելի ծանր էր ճեմում, գիշերապահ-
ները աւելի եռանդով երգում և օտարականին
քարկացնում, համբերութիւնից հանում:

Վերջապէս օտարականին ատելի լուսինը ան-
յայտացաւ, երկինքը պատեց դաժանատեսիլ խա-
ւար ամպերով, բայց գիշերապահները նոր եռան-
դով, հակառակի պէս, երգում էին այն կտուրների
վրայ, որտեղ օտարականը գործ ունէր:

— Այ, ալապէս չի լինի, գործս կ'լետանայ,
պէտք է մի հնարով գիշերապահներին հաւաքել
վերին թաղը, գիւղից դուրս, որպէս զի ես ներ-
քին թաղում իմ գործը վերջացնեմ»:

Այս տեսլով օտարականը ստուերների միջից,
պատերի տակով չար օձի նման սողալով, գգու-
շութեամբ հասաւ գիւղի վերին ծայրը, մօտեցաւ
100 սայլից բաղկացած մի խոտադէզի և մնւմուսց.—

«Սա է քեօխլի խոտնոցը. սրա տէրը իմ երե-
սին մուր քնեց, իշի վրայ թարս նստեցրեց, սաղ

գեղի մէջ խայտառակեց և ինձ չոլերը քցեց»:

Այս խօսքերը ասելով՝ վառած լուցքին դէմ արեց չոր խոտի դէզին ու ինքը անյայտացաւ: Մի ակնթարթում փչող քամու օգնութեամբ ամբողջ դէզը կրակ դառաւ: Իսկոյն կպան միւս դէզերը, լի դարմանով մարագները և մօտիկ տները:

Փիշերապահների սարսափելի աղմուկը ամբողջ գիւղը արթնացրեց: Տղայ, աղջիկ, հարսներ, պառաւներ, ծերունիներ, բոլորը, բոլորը, որը շապկանց, որը կիսահագնուած, գլխաբաց, ոտաբոբիկ, ջրի ամանները առած, շտապում էին հրդեհի առաջը առնելու:

Խոտատէրերի լաց ու աղաղակը, սուգ ու շիվանը, օգնողների ճչոց-ձվոցը, ամբոխի հարահրոցը, կատաղի հրդեհի ճարձատիւնը միմեանց խառնուելով, այնպիսի մի սարսափելի դղրդիւն էին քցել գիւղի մէջ, որ, ինչպէս ասում են, մէրը մանուկն ուրացել էր. կարծես Հասանխանը մտել գիւղը, կոտորում, թալանում էր:

Տները դատարկ, դռները բաց թողել, բոլորը թափւել էին հրդեհի մօտ և օգնում էին:

Այս յաջող հանգամանքից օգուտ քաղելով օտարականը, մտաւ Ասլան աղի տունը: Ամեն

քունջ ու պուջախի հետ ծանօթ էր. կոտրեց փողի սնդուկը, կապոցը գրպանը դրեց ու թռաւ դուրս: Մօտեցաւ Սոնայի խրճիթին, դուռը բաց էր, Սոնան տանը չէր. ներս մտաւ հէնց այն ժամանակ, երբ Տեփանը քնից նոր արթնացած պատրաստուում էր տանից դուրս գալու: Բայց օտարականի անգութ դաշտյնը դռան մէջ փռեց նրա դիակը, գլուխը մարմնից բաժանեց և անյայտացաւ:

Կարծեմ ընթերցողին յայտնի եղաւ, որ օտարականը տիրացու Մարկոսն էր, որ իւր կատաղած կրքերին մի փոքր բաւականութիւն տուեց, վրէժխնդիր լինելով իւր հակառակորդներից:

Ասլան աղէն, քեօխվան, Տեփանը նրա առաջին ատելիներն էին. դրանցից վրէժը առնելու համար, պատրաստ էր ամբողջ գիւղը հրդեհել:

ԺԹ.

Բարիւոյսը բացւեց. բայց սև բարիւոյս եկաւ ժողովրդի գլխին: 15 խոտի դէզեր, 10 լիքը մարագներ, 7 տուն ամբողջապէս մոխիր էր դարձել: Գեռ ժողովուրդը խռնուած աղաղակում էր սև մոխրակոյտերի շուրջը, դեռ դառնապէս ողբում էին անտուն մնացած գերդաստանները փողոցի

մէջ թափւած անական կահ կարասիքների վրայ, դեռ այլուած աւերակների միջից ծուխը քուլայ քուլայ բարձրանում էր, որ լանկարծ մի սուգ ու շիվան ընկաւ Արգարենց տունը. բոլորը հաւաքւել էին էին Տեփանի արիւնաշաղախ զիակի վրայ: Դեռ բոլորը ամիշած էին, երբ լանկարծ մի աղմուկ էլ բարձրացաւ Ասլան աղայի տանից:

«Տունս քանդել են, դռուս էր Ասլան աղէն, սրնգուկը կոտրել 800 մանէթս տարել են»:

Մէկը աղաղակում էր «վնջ փողերս, միւսը սղբում էր. «վնջ գոմերս, տներս մարագներս», միւսը սգում էր. «վնջ Տեփան ջան»: Վերջապէս ամբողջ գիւղում ուրախ մարդ չկար. ուղղակի, թէ անուղղակի կերտով բոլորն էլ վնասուել էին:

Ի.

Երեկոյեան զանգերից լետոյ գաւառաստիտը, քննիչը և այլ սլաշտօնական անձինք մերձակայ բնակիչների հետ թափուեցան զիւղը և սկսեցին խիստ քննութիւն: Ամենից առաջ քննիչը հարցրեց զիշերատպահներին. «Ի՞նչպէս սլատտահեցաւ հրդեհը:

«Աղս ջան, մենք ներքի թաղը ման էինք գալիս, մէկ էլ այն տեսանք, որ քեօսվի դէզը

այլուում է, մինչև իմաց տուինք, մինչև օգնութեան հասան, միւս գէգերն էլ կպան: Նրանից լետոյ ընկաւ մարագները, աները: Ել ոչինչ չգիտենք:

— «Ամենից առաջ, տանուտէր, քո խոտն են կպցրել, ում վրայ կարծիք ունիս, ով է քո թշնամին:

«Աղս ջան, սրանից 10 օր առաջ, մեր զիւղացի Աթոյենց Գեւան, անկարգութիւն անելու մտքով, Տեփանը տունը չեղած ժամանակը, մտել էր ներս, նրա կնոջ—Սանայի մօտ: Կինը աղմուկ էր արել՝ հարեւանները վրայ էին հասել, բռնել: Վանչեցին ինձ: Պարկեցնել տուի հէնց միւսնոյն տան մէջ, ճիպտաբ տուի Տեփանի ձեռք և հրամայեցի խբել մինչև 50 հատ: Երբոր արձակեցինք թողեց փախաւ և հետևեալ սպառնալիքը տուեց մեզ.—

«Բուք սպասեցէք, եթէ ես ձեր հախիցը չեկալ, կ'նշանակէ ես Աթոյենց Գեւան չեմ»:

— «Ուրեմն Աթոյենց Գեւան կամենալով իւր կատաղած վրէժխնդրութեան բաւականութիւն տալու, այրել է տանուտէրի խոտի դէզը և սպանել է Տեփանին»: Եզրակացութիւն դուրս բերեց քննիչը և խկոյն բանտարկել տուեց նրան:

Կանչեցին Սոնային:

— «Քո մարդուն որ սպանեցին, դու տես՛ր, ինչո՞ւ ձայն չհանեցիր», հարցրեց քննիչը:

— Երբոր ես լսեցի, որ աղաղակում էին.— «Աստուած սիրող, ջուր հասցնէ, խոտերը այրւան, գիւղը կրակ է ընկել».— իսկոյն ճշացի ու շորերս վրաս քցեցի, ջրի քուղէն առայ ու վազեցի և մինչև լոյս սւրիշների հետ ջուր էի կրում:

— Երբոր դու զնացիր, ինչո՞ւ Տեփանին էլ չգարթեցրիր, որ միասին գնայիք:

— Զարթեցրի, աղայ, մէկ երկու անգամ ճացի, թէ ել, գիւղը կրակ է ընկել, բայց ինքս էլ չսպասեցի, վազեցի դուրս:

— Զեր տունը թնչպէս են մտել, Ասլան աղայ,» հարցրեց քննիչը:

— Աղայ, պատասխանեց Ասլան աղէն. սրանից չորս օր լաւաջ Սարգարենց Կարապետը եկաւ ինձ մօտ և իրանց հարսի ոսկիքը գրաւ դրեց մի տարի ժամանակով, 50 մանէթ պարտք առաւ և մի բարաթ տուեց: Նրա ներկայութեան փողի անդուկը բաց արի և 50 մանէթը լանձնեցի: Այժմ ո՛չ բարաթը կայ, ո՛չ գրաւ դրած ոսկիքը և ոչ իմ 800 ր. փողը: Ինչպէս երևում է, այդ մարդը տեսնելով, որ մեր տանեցիք բոլորն էլ

եկել են կրակը հանգցնելու, (և մանաւանդ որ շտապելուց դուռն էլ բաց էին թողել) լաւ յարմար ժամանակ է գտել հարստանալու: Իմ կարծիքը դրա վրայ է:

Քննութիւնից լետոյ բանտարկւեցան գիշերապահները, Սարգարենց Կարապետը, Աթոյենց Գեւան և մի քանի ուրիշ կասկածաւոր մարդիկ: Այս ողորմելիները երգւեցին, խաչը կոթով կուլ տուին, լացին, ողբացին, եզ, կով, գուլթան, ծախեցին, սրան նրան կշտացրին, վերջին աղքատութեան հասան, խոնաւ և մուլթ բանդերի մէջ իրանց առողջութիւնը կորցրեցին, բայց երբէք չկարողացան արդարանալ: Որովհետև պատահած հանգամանքները իրաւունք էին տալիս ամեն մարդու միմիայն դրանց վրայ կասկածելու:

Միայն Արարչին, տիրացու Մարկոսին և ընթերցողին պարզ լայտնի է արդարն ու մեղաւորը: Ինչ հիման վրայ կասկածէին Մարկոսի վրայ, որ մի ամբողջ տարի էր ոտով գլխով գիւղից անլայտացել էր և ոչ մի մարդ, նոյն իսկ նրա ծնողները չգիտէին սրտեզ է, կենդանի է, թէ մեռած:

ԻԱ.

Այս եղեռնագործութիւնից հինգ ամիս լետոյ

տիրացու Մարկոսը, Թափառական Հրէայի նման զանազան քաղաքներ ոտի տակ տալուց յետոյ, վերագարձաւ գիւղ և որքան ուրախացաւ, երբ տեղեկացաւ, որ պատահած չարագործութեանց համար երբէք իւր վրայ կասկած չկայ:

— «Շատ ուրախ եմ, մտածում էր Մարկոսը. իմ հակառակորդները բոլորը վերջացան, բոլորը պատժւեցան, մնաց մէկը. այդ մէկը Ջառոն է, որ անգութ աստուածի նման իմ բազդի ճանապարհի առաջ կանգնել է և երկու անկից՝ սիրելիներին—ինձ ու Սոնային—բաժանում է իրարից: Բայց ահագին գետերը անցել եմ. մի բարակ առուն ինձ ինչ պիտի անի: Ախ, երանի, հազար երանի այն օրը, երբ, ես ու Սոնան, որպէս պատկած հարազատ ամուսիններ, միասին կապրինք:—

Մինչդեռ Մարկոսը խորին մտածմունքների մէջ խորատուզւած իւր վերջին եղեռնագործութեան ծրագիրն էր կազմում, Ջառոյին միւս աշխարհն էր ուղարկում, Սոնայի հետ. պատկում ու երջանիկ ապրում, նրա ականջը հասաւ դրոսից շարահանի ձայներ: Իսկայն դուրս վաղեց և տեսաւ, որ իրանց դռնից անց էին կայնում մի ջահիլ ննջեցեալ, որի ետևից, գլխին խրելով զնում էր Կոզոր ամին. — «վայ, Սոնա ջան. բալնայ ջան» գոռալով:

Տիրացու Մարկոսը իւր սիրելի Սոնայի մահուան լուրը լսելուն պէս, կարծես կալձականահար եղաւ, տեղուտեղ ուշաթափւեցաւ: Հարևանները վրա հասան, ներս տարան, ջուր անեցին և վերջապէս ուշքի բերին: Այդ օրը Մարկոսի բոլոր ծրագիրները և քաղցր յայտերը ջարդ ու փրշուր եղան:

— «Եթէ վերջը այսպէս պիտի լինէր, եթէ ես չպիտի արժանանայի Սոնային օրինաւոր ամուսին դառնալու, եթէ անգութ մահը պիտի խլէր ինձանից իմ սրտի սիրածը. էլ ինչո՞ւ անմեղ արիւններ թափեցի, ինչո՞ւ շատերի թշւառութեան պատճառ դառայ, ինչո՞ւ մի ամբողջ գիւղ կրակ տուի այլեցի. . . »: Այսպէս էր մտածում տիրացու Մարկոսը և գիշեր ցերեկ ողբում:

Սոնայի ամենամոլեռանդ սիրոյ քաղցրութեան մէջ թմրած—քնած էր տիրացու Մարկոսի խիղճը: Նա, այդ կատաղի սիրով արբած, գործում էր ամեն տեսակ չարագործութիւն: Իսկ այժմս, երբ այլ ևս չկայ Սոնան, չբացաւ նրա սիրոյ առարկան. սիրոյ արբեցութիւնից սթափւեցաւ, խիղճը արթնացաւ և սկսեց ինքն իրան մեղադրել պախարակել, բայց շատ ուշ. անցեալը անդառնալի էր:

ԻՖ.

Սոնայի մեռնելուց յետոյ՝ մեռաւ նաև տիրացու Մարկոսի բոլոր կազմած ծրագիրները և ձգտումները: Նա այդ չարագործութիւնները անում էր Սոնային տիրապետելու, նրան օրինաւոր ամուսին դառնալու դիտաւորութեամբ: Սոնան մեռաւ, մեռաւ նա և Մարկոսի երիտասարդական աշխոյժը, մարեցաւ սրտի սիրոյ կրակը և ոչնչացաւ բորբոքւած սէրը:

Անցան տարիներ: Մարկոսի անցեալին ծանօթներից շատերը մեռան, Հանգամանքները փոխեցաւ, թշնամիների հետ հաշտուեցաւ, միջահասակ մարդ դառաւ, իւր թափառական կեանք վարելը թողեց, որպէս հասակն առած մարդ մտաւ նոր կեանքի, նոր շրջանի մէջ, զգաց նոր պահանջներ:

Այժմ նա ամեն ջանք թափում էր իրան «գիտնական և բարի քրիստոնեայ» ցոյց տալու: Դիշեր ցերեկ ժամանակը անց էր կացնում ընթերցանութեամբ: Մեծ մասամբ կարդում էր կրօնական գրքեր: Շարունակ յաճախում էր եկեղեցի, շապիկ էր հագնում, դպրութիւն կամ սպասաւորութիւն էր անում. ամեն տեսակ ծոմ ու պառ

պահում էր, ծունր դնելիս քսան երեսուն անգամ այս և այն երեսը քարերին քսում, աչքերը դէպի երկինք յառած, ձեռքերը բազկատարած արտասւելով աղօթք անում: Շատ, շատ անգամ գտնում էր կրօնական գրքեր, հաւաքում էր գլխին ծերերին, պառաւաններին, կարդում և նրանց հոգեպէս մխիթարում:

Նա հիւանդների վրայ նարեկ էր կարդում, դիւահարներին և սիրահարների համար գիր ու համալիլ գրում. թիզ բաց անում, գարի գցում, նետ դնում, թասի ու եղունկի մտիկ անում. գլխացաւի, սանջուի, չբեր կանանց գրեր գրում, և այսպէսով թէ հարստանում, միամիտներին կողոպտելով, և թէ իւր համբաւը, որպէս գիտնական տիրացու և որպէս ճշմարիտ քրիստոնեայ, հռչակում:

Հասարակութիւնը տեսնելով տիրացու Մարկոսի ջերմեռանդութիւնը, կրօնական սուրբ զգացմունքները, և մանաւանդ «ծովի չափ գիտութիւնը» ցանկանում էր այդպիսի մի քահանայ ունենալ:

Եթէ պատահում էր, որ մէկը հասարակութեան այդ ցանկութիւնը ոչնչացնելու համար Մարկոսի անցեալ կեանքից մի տգեղ օրինակ

էր բերում, միւսները իսկոյն պաշտպանում էին:

— «Ե՛հ, բան ես ասում: Եղբայր, այն ժամանակ ջահիլ էր, խելքը չէր կարում, լիրբ մարդկանց ձեռք էր ընկել: Մեզանից ո՞րը ջահիլ չի եղել ու այդպէս ջահելութիւններ չի արել: Առաջ ինչ եղել, եղել է, եղածը անցել է: Մարդը հիմի ժամ գնում է, պաս պահում է, ճանճը չի կոխում՝ թէ հոգի կկորի, մէկի հաւին քշալ չի ասում, էլ ուրիշ ինչ կուզէք, սրանից էլ լաւ տէրտէրացու ո՞րտեղից պիտի գանիք»:

Տիրացու Մարկոսը միմիայն քահանայ դասնալու նպատակով էր իրան ցոյց տալիս ճշմարիտ քրիստոնեայ: Նա իւր շողոքորթութեամբ, կեղծաւորութեամբ և հազար տեսակ խորամանկութեամբ բոլորի սիրտը գրաւեց, թշնամիների համար դառաւ ամենասիրելի մարդ: Ասլան աղալից տարած 800 մանէթը տոկոսով աճում էր գանազան մարդկանց վրայ: Երկու այգքան էլ ինքըն էր աւելացրել իւր խաբեբայական արհեստներով: Երբ քահանայ դառնալու հարցը առաջ եկաւ, հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը գրաւելու համար, հարկաւոր մարդկանց բերանները աջհամբոյրներով և պատշաճաւոր ընծաներով շարունակ քաղցրացնում էր: Հարուստ տիրացու Մարկոսը Հոգևոր Իշխանութեան համար

դառել էր մի կթու կով: Ամբողջ երկու տարի կթեցին, խուզեցին, լաւ ցամաքեցրին և ապա գործերը կարգի գրին:

ԻԳ.

Օրը կիւրակի էր: Գիւղի մէջ այդ օրը մի արտասովոր շարժողութիւն էր նկատուում: Ամեքը այդ օրը եկեղեցի էին շտապում: Առաւօտեան ժամը 10-ն էր: Եկեղեցում ասեղ բցելու տեղ չկար: Վարագոյրը ծածկել էր սեղանը: Գպիւրները երգում էին. բոլորը աչքերը լառած վարագոյրի բացելոյն էին սպասում: Վերջապէս բացւեցաւ վարագոյրը և նորընծայ Տէր Մարկոսը առաջին անգամ կերկերալով, կեղծ լացակուծած ընդհատ ընդհատ աղաղակեց. — «խաղաղութիւն ամենեցուն»:

Բոլորը միասին ամենայն ջերմեռանդութեամբ երեսները խաչակնքեցին: Բայց մէկ ծերունի, այդ բոպէին մտաբերելով Սոնայի հետ միասին իշխ վրա նստած հանդէսը, մի խոր հառաչանք արձակեց, մրմնջալով հետևեալ խօսքերը. — «փառք բեզ Աստանձ, ինչեր են լինում աշխարհումս:

ԻԴ.

Տիրացու Մարկոսի մինչև Տէր Մարկոս դառնալը, Ջաւոյի կեանքը անասահով և վտանգաւոր դրութեան մեջ էր: Թէ Ջաւոն, թէ նրա ծնողները և թէ Թորոսը, զանազան երևոյթների վրայ հիմնուած, եկել էին արդէն այն եզրակացութեան, որ Ջաւոյին սպանելու դիտաւորութիւն ունի Մարկոսը, այդ պատճառով քալլ առ քալլ հետևում էին Մարկոսի ամեն մի գործերին և նրա բացակայութեան ժամանակ Ջաւոն միշտ հէրանց տանն էր ապրում: Բայց երբ Տէր Մարկոս դառաւ, Ջաւոյի կեանքը ապահովեցաւ:

Տէր Մարկոսը, քահանայական կոչման մէջ մտած օրից, իւր բոլոր ուշադրութիւնը կենդրոնացրեց հետևեալ գլխաւոր կետերի վրա.

1, փող հաւաքել. 2, գիտնական երևալ և իրանից արժանաւոր իւր շրջանում երբէք չլինի. գուր գալ բոլորին: Այդ բոլորը ձեռք բերելու համար Տէր Մարկոսը գործ էր գնում իւր պժգալի կեղծաւորութիւնները, իւր պախարակելի շողջորթութիւնները, իւր կեղծ ու պատիր ձևերը, իւր ամօթալի երկերեսանութիւնը, և վերջապէս ամեն տեսակ անբարոյականութիւն սուրբ էր իւր մի որ և իցէ նպատակը, ցանկութիւնը կատարելու

համար: Տէր Մարկոսի անթիւ ու անհամար պախարակելի յատկութիւնների մէջ, երկու տղեղ յատկութիւն ծայրահեղութեան էր հասած: Առաջին՝ նախանձութիւն և երկրորդ այս կամ այն վիճաբանութեան ժամանակ, զօրեղ կուսակցութեան պատկանիլ, որոշ և հաստատ ուղղութիւն չունենալ: Նախանձութիւնը նրա մէջ այնքան վառ ու բորբոքած էր, որ կատաղութիւնից քիչ կ'մնար խելագարէր, եթէ մէկը ասէր թէ—«Տէր Գէորգը Տէր Մարկոսից արժանաւոր է»: Ել չէր աշխատի գործով ապացուցանել, որ ինքն է արժանաւորը, այլ կսկսէր հազար ու մի տեսակ կեղտոտ միջոցներով իրանից արժանաւորի վարիչ կոչել հասարակութեան առաջ: Չափազանց ցուցամոլ էր. պարծանօք կը բազմապատկէր և մունետիկի պէս կ'հրատարակէր ամեն տեղ, եթէ այս ինչ նշանաւոր պաշտօնական անձը իրան այցելութեան է եկել, կամ իրա հետ ճանապարհին պատահելիս խօսել է, կամ հեռագրով իւր տօնը շնորհաւորել է:

Ամբողջ 10 տարի սոյն ուղղութեամբ կառավարեց զիւրը. հազար ու մի տեսակ խռովութեանց, երկպառակութեանց և կուսակցութեանց առիթ դառնալով: Տասներորդ տարին Ջաւոն արևը տուեց Տէր Մարկոսին՝ յիշատակ թողնելով երկու տղայ, երկու աղջիկ: Միևնոյն տարին մեռաւ և Թորոսը:

Չաւոյի մեռնելուց յետոյ՝ Տէր Մարկոս Հայրը շատ յաճախ էր պատահում գանակոծութեան, շատ շար ու բարի անցաւ նրա գլխին, շատ անբարոյականութեանց մէջ խայտառակեցաւ, շատ վէճեր ու կռիւներ առաջ եկաւ, շատ տգեղ երևոյթներ առաջացան: Հասարակութիւնը վերջապէս հասկացաւ Տէր Մարկոսի կեղծ ասուած պաշտութիւնը, նրա համալինների գատարկութիւնը, նրա կեղծաւորութիւնը և վերջապէս այլ ևս չկարողանալով համբերել նրա գայթակղեցուցիչ վարք ու բարքին, հասարակական վճիռ կայացրին, Հոգևոր իշխանութեան բողոքագրեր ուղարկեցին և Տէր Մարկոսին նրա քահանայութեան 13-դ տարին ամբողջ ընտանիքով զիւղից Հալաճեցին:

ԻԵ.

18. . . թւականին, երբ փողը հեղեղի պէս գնում ու գալիս էր, երբ վաճառականութիւնը ամենայաջող հանգամանքների մէջ գտանւելով, առատ առատ հնձում է իւր բազմաթիւ յաճախորդներից, երբ մարդիկ փողի առատութեան, գործի աջողութեան պատճառով ամենաշուք խնճովքներ էին սարքում և մինչև լոյս ամենայն ջերմեռանդութեամբ Բագոսի պատական կենացը կոնծում

և վերջապէս) երբ մարդիկ հարստացած էին և բարեգործութիւն անելու պատրաստ, այդ ժամանակ տաճկական օղոստափառ Սուլթանի բազմաթիւ քաղաքներից մէկում յանկարծ լոյս ընկաւ մի ինքնակոչ ազգասէր, որը օգուտ քաղելով վերսլիշեալ յաջող հանգամանքներից, տեղական դպրոցների և եկեղեցիների բարեկարգութեան ղեկը իւր ձեռքը առաւ և սկսեց ձրի ծառայել իւր ազգին:

Չ մոռանանք տեսլ, որ այդ ժամանակ մեր ինքնակոչ ազգասէրը հազար ու մի տեսակ տեղերից այդ քաղաքում խմբուած խայտաճամուկ բազմաթիւ վաճառականների, արհեստաւորների ծառայողների և այլ զանազան դասակարգերի մէջ բաւականին հեղինակութիւն ունէր, այնպէս որ, մի ար և իցէ առաջարկութիւն արած ժամանակ բազմաթիւ համակրողներ կուեննար:

ԻԶ.

Քաղաքի ամենատեղեկաճ մասում, բազմաթիւ աղքատ տների մէջ գտանւում էր մի, հին շինութիւն, որ իւր արտաքին տեսքով ոչնչով չէր զանազանւում հարեան խրճիթներից: Ներսը պատերի տակ, ասիական սրճանների պէս, անշարժ տախտեր էր ամրացրած մի արշին լայնութեամբ,

և վրաները հին կապերաներով և գոյնգոյն մինտարներով ծածկած, խոտէ բարձերը պատերի տակ շարած: Աերևը ծալապատիկ բազմել էր ծերունի Հայրիկը, հին ցնցոտիների մէջ ծածկած իւր բրդոտ և յաղթանդամ մարմինը: Երա կեղտոտ վարտիկը, ծումուած փափուճները, ծակծկած ֆասը, կարճիկ կտորը և գունաւոր անթարին կազմում էին Հայրիկի առաջին հարստութիւնը: Հայրիկը նոր էր նշանակւել այդ քաղաքի և վիճակի Հոգևոր գործերի կառավարիչ: Իւր հօտը կթելու և ոչխարները խուզելու նոր ծրագիրներ էր կազմում: Չափազանց տըտնջում էր, երբ բողոքաւորներ չէին լինում, աղջիկ չէին փախցնում, չհաս պսակներ ուշ էր պատահում, քահանաների մէջ կուսակցութիւն չէր լինում, խոսքութիւն չէր ընկնում: Շատ անգամ Հայրիկը ամենաչնչ խորամանկութեամբ ստեղծում էր վերոյիշեալ հանգամանքները և սկսում էր ամեն կողմից հնձել:

— Յարգելի Հայրիկ, ասաց մի օր մեր ինքնակոչ ազգասէրը. ժողովրդի փողի առատ ժամանակն է, պէտք է մեր դպրոցները և եկեղեցիները ազատել ներկայ դառն դրութիւնից և փոքրը ի շատէ բարեկարգել: Ես պատրաստ եմ ամեն տեսակ ձրի ծառայութիւն յանձն առնելու:

— Եթէ դուք հաստատ խօսք էք տալիս, ասաց Հայրիկը, ինձ աջակցելու, ես ամենայն պատրաստականութեամբ կանգնած եմ ձեր սկսած գործի գլուխ և իմ ձեռքից եկածը չպիտի խնայեմ:

— Պատուելի Հայր, ես արդէն իմ միտքը հասարակութեան ամեն դասակարգի մէջ արծարծել եմ և ամեքին պատրաստել. այնպէս որ, հարկաւոր է միայն մի ընդհանուր ժողով կազմել:

Երկուսի մէջ փոխադարձ համաձայնութիւն կայացաւ՝ եկեղեցիները և մանաւանդ դպրոցները բարեկարգելու:

ԻԷ.

Օրը կիւրակի էր: Քաղաքի բոլոր խալտաճամուկ հասարակութիւնը եկեղեցու ընդարձակ բազում խոնուած սպասում էին նիստը բացելուն:

— Սիրելի եղբայրներ, սկսեց իւր սովորական ճառը պ. Ազգասէրը, դուք ցանկանում էք, որ ձեր որդիքը կրթին և ժամանակին բարի մարդ և ազգին պիտանացու անդամներ դառնան: Եւրոպական երկրներում ծնողները իրանց հագի շապիկը վաճառում են, շատերը մինչև անգամ դռնէ դուռ ընկած ողորմութիւն հաւաքելով իրանց որդւոցը կրթութեան են տալիս: Մեզ հա-

մար ամօթ ու նախատինք է, որ այսօր մեր ազգային դպրոցները ամենախաւար դրութեան մէջ են: Մեզ համար նախատինք է, որ մեր գաւակները փոզոցները թափառելով անկարգութիւններ են սովորում և ազգի համար ցեցեր են մեծանում: Ահա սոյն ստորագրութեան թերթը դնում եմ ձեր առաջը, ո՞վ ցանկանում է, թող սպացուցանէ թէ ինքը հայ է: Ամենից առաջ ահա հրապարակաւ յայտնում եմ ձեզ, որ ես ուրախութեամբ երեք տարի ձրի յանձն եմ սունում դպրոցների տեսչութիւնը»:

— Սիրելի ժողովուրդ, մեր պ. ազգասէրը ամեն ինչ բացատրեց, առաջ կանգնեց Հայրիկրես միայն կ'ըզդրեմ և կ'օրհնեմ ձեր Աստուածսիրութիւնը, որ օգնէք ձեր դպրոցներին, որ մենք ևս կարողանանք ձեր առատ նուէրներով ծաղկեցնել ձեր դպրոցներն և կրթել ձեր գաւակներն»:

Թէ պ. Ազգասէրի ճառախօսութիւնը և թէ Հայրիկի կարճ տտենաբանութիւնը լաւ գրգռեց հասարակութեան զգացմունքները. բոլորն էլ համակրութեամբ մօտեցան ստորագրութեան թերթին: Ամեքն էլ ցանկանում էին ցոյց տալ իրանց գրպանի կարողութիւնը: Ամենահարուստները ստորագրեցին 1000-ական ռուբլի, յետոյ 500-ական, այդպէս աստիճանաբար իջնելով շատ քչերը 10 ռ. ստորագրեցին: 18 հազար մանէթ նաղտ գումար

գոյացաւ, հասարակութիւնը ցրեցաւ, իսկ պ. Ազգասէրը պատկառելի դումարը աղլուխի մէջ կապոց արած Հայրիկի հետ ներս մտան առաջնորդարան:

— Գիտէք Հայրիկ. մեր դպրոցների մէջ առ այժմ հարկաւոր է մի ներքին բարեկարգութիւն: Հարկաւոր է դասարանների պատուհանները մեծացնել, նոր դռներ բանալ, սեղաններ շինել տալ և վերջապէս հարկաւոր է այդ շէնքը քիչ շատ դրսոցի նմանացնել: Մեզ հարկաւոր է լաւ ուսուցիչներ, դպրոցի համար հարուստ գրադարան, վերջապէս շատ պակասութիւններ ունինք հոգալու:

— Աստուած ողորմած է, երբ այս 18 հազարը հատաւ, կրկին կ'հաւաքենք, կրկին կ'հոգանք, ասաց Հայրիկը:

— Ոչ Հայրիկ. այդպէս չի լինի. հիմոյ քանի որ փողը առատ է, քանի որ ժողովուրդը այսպէս յաջողութեան մէջ է, պէտք է աշխատենք դպրոցների համար մի անձեռնմխելի գրամագլուխ պատրաստել և նրա ապագայ վիճակը ազատել մուրացկանութիւնից: Շատ չի անցնի, կարճ ժամանակից յետոյ ժողովուրդը իւր ձեռքն ունեցած այժմեան կարողութիւնը կ'վատնէ և այն մարդը, որ այսօր 1000 մանէթ ուրախութեամբ նուիրեց, վեց տարի յետոյ 5 մանէթ էլ չի կարող տալ: Ուրեմն պէտք է շտապել, և հանգա-

մանքներից օգուտ քաղել:

Ես ըստ ամենայնի համակրում եմ ձեր բոլոր կարծիքները պ. Ազգասէր. և պատրաստ եմ ձեզ հետ գործելու:

Հայրիկը և պ. Ազգասէրը միմեանց մէջ համաձայնութիւն կալացրին. դպրոցի համար դրամազուլիս կազմելու մի ընդարձակ ծրագիր մշակեցին, Հայրիկի խոհարարին, ազգասէրի քրոջ որդուն, և այլ մի քանի աշակիսի շատ մօտիկ կապակցութիւն ունեցող երիտասարդների ուսուցիչ հրաւիրեցին, հանդիսաւոր օրհնութեամբ և խուռն բազմութեամբ դպրոցները բաց արին, օրհնեցին, երգեցին, ճառախօսեցին, ազգասիրական ցոյցեր արին և ուրախ տրամադրութեան տակ ցրեցան:—Այդ օրուանից պ. ազգասէրը ձրի տեսուչ էր, հոգաբարձու էր, երեցփոխ էր, գանձապահ էր, և վերջապէս որպէս գործի հիմնադիր ամենայն ինչ էր: Նրա ասածը աստածային պատգամ էր ժողովրդի և դպրոցական գործողների համար: Պ. Ազգասէրը հաւաքեց իւր շուրջը այնպիսի ուսուցիչներ, որոնք գիւղական նոր հարսների նման ըստ ամենայնի միշտ հանեստ էին: Թող լինէին ուսուցիչները Բագոսի երկրպագուներ, հացթուխներ, գիւղացի տաւարածներ, խաղամօլ, անբարոյական և անփորձներ:

Թող օրերով շաբաթներով դասի չգալին, թող հարբած դասատուն մտնէին, թող ոչինչ չնովորացնէին, այդ ամենեւին նշանակութիւն չունէր ազգասէր տեսչի համար. բաւական է, որ նրանք հնազանդ են իրան. և, մանաւանդ փողոցները շրջէին, հասարակութեան և բոլոր լրագրութեանց մէջ դպրոցացնէին և իրանց տեսչի հաւատարիմ և ձրի ազգասիրութիւնը հռչակէին. այնուհետեւ բոլորի վարձն էլ կաւելանար և երախտագէտ տեսուչն էլ իր կողմից նրանց անձնանուէր ծառայութիւնները կգովաբանէր ամեն տեղ: Այդ ժամանակ դպրոցները դառան մի կտոր հիւթալի շաքար, որի վրա կուտակեցին մեր քաղցրասէր ճանճերը:

Պ. Ազգասէրը հրապարակ հանեց հետեւեալ աղբիւրները. —

1. ձարել էր՝ 100 մշտական անդամներ, որոնք անխափան, տուած ստորազրութեան համաձայն, տարեկան վճարում էին 30-ական ռ. $100 \times 30 = 3000$ ռ.
2. Յիսուն անդամ, իւրաքանչիւրը 15-ական ռ. $15 \times 50 = 750$ ռ.
3. Իւրաքանչիւր ծառայողից մանէթին մէկ կոպ.—տարեկան 500 ռ.
4. Յիսուն անդամ, իւրաքանչիւրը տարեկան

10 մանէթ.. 10 X 50 = 500 ր.

5. Ամեն մի ննջեցեալից, մկրտութիւնից, պրակից, ըստ կարողութեան, ստանում էր դպրոցապարտկան հարկը, տարեկան 800 ր.

6. Տօնակատարութեանց. խնջոյքների, այս կամ այն հանդէսների ժամանակ, դպրոցը անպատճառ իւր բաժինը պիտի ստանար, տարեկան 800 ր.

7. Տարեկան յօգուտ դպրոցի առնուազը չորս ներկայացում և մի երկու անգամ էլ պարահանդէս կ'լինէր, տարեկան 2000 ր.

8. Այդ պարահանդէսների ժամանակ պ. Ազգասէրը դպրոցի նախասենեակում մի խանութ կ'բանար: Գործը կ'լանձնուէր հեղինակութիւն և պինգ երես ունեցող տիկիներին, որոնք մի իւրնձորը 25 ր. կ'վաճառէին, մի բաժակ գինին 10 ր. այս էլ 600 ր.

9. Բնլոր ուսանողներից տարեկան թոշակ ստացւում էր մօտ 3000 ր.

10. Տարեկան երեք անգամ պ. Ազգասէրը մի քանի բարձրատիճան աղաների հետ խանութէ խանութ, տնէ տուն շրջելով յօգուտ դպրոցի կամաւոր նուէրներ կ'հաւաքէին, տարեկան 2000 ր.

11. Ուսուցչական կազմակերպութիւնը բարձր դասատան աշակերտների և աշակերտուհիների հետ Չատկին և Զրօրհնէքին «Աւետիս», ման կ'գալին ամեն տուն, 800 ր.

12. Աշակերտուհեաց ձեռագործները տարին մի անգամ վիճակախաղ կ'հանէին. 1000 տոմսակի մէջ հարիւրը լիքը կ'լինէր. տոմսակը մի ըուբլի արժէր. արդիւնք կ'մնար 2000 ր.

13. Տարին մի անգամ ամեն տեսակ խանութ կ'ըջէին. մրգավաճառից 4 գրով. խնձոր կ'վերցնէին, գինետնից գինի ու օղի. մի ուրիշ տեղից ամանեղէններ. մսավաճառից ոչխարի մորթի և բուլբուլը կ'հաւաքէին դպրոց և կանոնաւոր կերպով կը դասաւորէին գահլիճում. կատարեալ ցուցահանդէս, որովհետև այդ տեղ գտանւում էր իւղ, պանիր, մածուն, գգալ, հաց, կոշիկ, ցորեն, ալիւր և այն ամենը, ինչ որ քաղաքում վաճառվում էր: Սկսում էին վիճակահանութիւնը. ամեն մարդ ցանկանում էր իւր բաղբը փորձել: Ընդհանուր ծիծաղ էր բարձրանում, երբ մի հաստափոր աղալի գուրս էր գալիս մի գոյգ տրէխ. (կգոյանար 1800 ր.)

14. Չատկին և Զրօրհնէքին եկեղեցու դռանը յօգուտ դպրոցների մոմավաճառութեան սեղաններ

կ կազմէին. ո՞վ իրաւունք ունէր առանց մոմ գնելու եկեղեցի մտնել. 5 կոպէկի մամը 5 ր. 10 ր. 15 ր. 25 ր. արժէր. նայելով թէ ո՞ւմ վրայ են վաճառում: Միւսնոյն մոմը 50 անգամ կ վաճառուէր. որովհետեւ ժամհարները, լուսարարները պատուէրին համաձայն եկեղեցի մտած մոմերը կ հաւաքէին նորից դուրս կուզարկէին. (արգիւնք 1100 ր.

Բացի այս բոլորից մեր Ազգասէր տեսուչը էլի հազար ու մի տեսակ աղբիւրներ ունէր, և գիշեր ցերեկ ամեն տեսակ դառն տանջանքների համբերելով, դպրոցների երկաթեայ լուծք իւր ազգասէր ուսերի վրա բարձած տնքտնքալով գնում էր: Պ. Ազգասէրը իւր տոկուն համբերութեան հետ ունէր մի գրաւիչ և ճարտար լեզու, և որ առաւելն է, զարմանալի պինդ երես ունէր: Ոչ մի անյաջող դէպք չէր կարող վհատեցնել նրան. անձինը կ ծնեցնէր, ձուկից բուրդ կ խուզէր: Բառի ընդարձակ նշանակութեամբ կատարեալ բոշայ, բայց ազգասէր բոշայ:

Ազգասէր բոշան իւր հնարած այս բազմաթիւ խայտաճամուկ աղբիւրներով տարեկան առնուողը 18 հազար ռուբլի անպատճառ կ գոյացնէր: Գլխոցի տարեկան ծախքը առ առաւելն 4000 ր. էր. ուրեմն տարեկան 14 հազար մտ-

նէթ պ. Ազգասէրը յետ էր քցում դպրոցի ապագան ապահովելու և մուրացկանութիւնից ազատելու համար: Ահա փառաւոր գործ, պաշտե՛լի նպատակ, զուտ և անարատ ազգասիրութիւն, և երկնային մարգ:

Ժողովուրդը ամենեւին չէր հետաքրքրում, թէ իւր տուած առատ նուէրները ծառայում են բուն նպատակին թէ ոչ: Ուզած ժամանակը նուէրը կ տալին ու կ մոռանալին: Գործի և առհասարակ վաճառականութեան այնպիսի արդիւնաւոր ժամանակն էր, որ հաց ուտելու ժամանակ անգամ չէին ճարում: Մանաւանդ, երբ գործի գլուխ կանգնած էր այնպիսի մի ազգասէր, որի վրա կասկածել, կնշանակէ Աստուած ուրանալ: Ժողովուրդը հոգւով սրբով հաւատում էր նրան, յարգում ու սիրում էր նրան:

ԻԸ.

Անցաւ 7 տարի: Մեր ազգասէրը գեռ նահատակոււմ էր ազգի դպրոցների յառաջադիմութեան համար: Հանգամանքները փոխուել էր, առուսուրը դադարել, փողը սակաւացել, մարդիկ տխուր էին. մեր ազգասէրը յուսահատութեան մէջ էր. բոլոր յորդաբուխ աղբիւրները ցամաքել էին, միայն մի քանիսը հացիւ հազ չլլում էին: Հոգե-

վարքի մէջ հառաչում էին դպրոցները: Այս ժամանակ պ. Ազգասէրը, դպրոցի կեանքը ազատելու համար, մի սրտաշարժ լրագրական յօդուածով դիմեց ընդհանուր ազգի օգնութեան, բայց տարաբաղաբար ոչ մի տեղ արձագանք չդատու: որովհետեւ ամեն քաղաք, ամեն գիւղ ունէր իւր ազգային դպրոցները ու հոգսերը: Այս փորձից յետոյ մեր ազգասէրը վերջին յուսահատութեան մէջ լրագրութեան յանձնեց իւր հրատարականք հետևեալ նախատական յօդուածի հետ. —

«Յարգելի Հայեր. ամբողջ 7 տարի իմ անձնական գործերս, իմ տնական հոգսերը երեսի վրա թողած, ամենայն անձնանուիրաբար ծառայեցի ազգիս երկսեռ դպրոցներին: 7 տարի կատարեցի տեսչութեան պաշտօնը բոլորովին ձրի: Այն խարխուլ խրճիթները, որոնք ախոռի չափ նշանակութիւն էլ չունէին՝ վերանորոգեցի, զազանազան փոփոխութիւնների ենթարկեցի և ըստ ամենայնի վերանորոգեցի և դպրոցի նմանացրի: 400 աշակերտի կրթութեան համար լաւ փորձած ուսուցչական խումբ կազմեցի, գրագարան հիմնեցի, երկու դասարանից կազմած ախոռանման դպրոցը՝ 11 դասարանից բաղկացեալ բարեկարգ դպրոց շինեցի. շատ անգամ այս և այն ծախքերը անգամ իմ սեփականութիւնից հոգացի: Այժմ դպրոցը, ըստ ուսում-

նականին ներկայ յառաջադիմութեամբ ամենաճաղկեալ և նախանձելի վիճակի մէջ է, բայց, ըստ նիւթականին, վերջին աղքատը: Ես այլ ևս ոյժ չունիմ ձրի ծառայելու, իմ տնկած ծառերը, իմ զարգացրած այգին, իմ սիրելի դպրոցները յանձնում եմ ազգին՝ իմ գրաւոր հրատարականի հետ: Ամօթ և նախատի՛նք այն հայերուն, որոնք չեն աշխատի իմ տնկած ճաղիկները ոռոգելու և զարգացնելու, իմ գործը շարունակելու:

Պ. Ազգասէրի այս հրապարակական յօդուածը շատերին հետաքրքրեց, ժողովրդի մէջ մի շշնչոց ընկաւ, աւելի զբզուռածները լրագրութեան դիմեցին հետևեալ յօդուածով. —

— «Շատ ցաւում ենք, որ մեր պ. Ազգասէրը 7 տարի մեր դպրոցներին ձրի և անձնանուէր ծառայելուց յետոյ, հրատարեցաւ գործից, թողնելով մեր դպրոցները վերջին աղքատութեան մէջ: Բայց միևնոյն ժամանակ ամենախոնարհաբար խնդրում ենք իւր 7 տարւայ գրաւոր հաշիւները և հաշուեմատեանները յանձնել ներկայ նորընտիր հոգաբարձութեան և այսուհետև էլ դարձեալ չխնայել օգնելու դպրոցներին»:

— Պ. Ազգասէրը վրդոված և վշտալի բառերով պատասխանեց. — «Ամօթ ձեզ հայեր, ամօթ. ամբողջ 7 տարի հազար ու մի տեսակ դառն

տանջանքներ քաշեցի, դպրոցներին ձրի ծառայեցի, այդ բաւական չէ, հիմայ էլ լիբը մարդիկ իրանց անձնական կոպէկական հաշիւների համար. ժողովուրդը գրգռում են և ինձանից հաշիւ են պահանջում: Ապերախտ մարդիկ. նախոս իմ աշխատանքին, չարժէ այսպիսի տգէտ ազդին ծառայելը: Լսեցէք, հայեր, ահա իմ հաշիւները. ես դռնէ դռն ընկած կոպէկ կոպէկ փող եմ մուրացել և 7 տարի դպրոցները կառավարել եմ. ամենայն տարի հազիւ հազ մուտքը ծախքին ծածկել է. շատ անգամ էլ պարք է մնացել. ես վեկսիլով փող եմ առել և հոգացել: Ասածներին կենդանի վկայ են բոլոր ուսուցիչները, Հայրիկը և մի քանի արժանաւոր մարդիկ: «Ինչ որ առել եմ, այն էլ ծախսել եմ». այս է իմ կարճ և վերջին հաշիւը:

Այս պատասխանից յետոյ Հասարակութիւնը նոր հասկացաւ, որ կեղծ ազգասիրութեան դիմակի տակ ծածկւած է եղել մի աւագալ: Բայց թնչ օգուտ, անցեալը անցել էր. պ. Ազգասէրը բերանը սրբել, ասպարէզից հեռացել, իւր համար երկարկանի հոլակապ տներ էր շինում և իւր ազգի միամտութեան վրա ծիծաղում, մոռանալով միանգամայն ազգն էլ, ազգութիւնն էլ, եկեղեցին էլ:

Իսկ Հայրիկը ամբողջ վիճակի համար դառել էր մի անգութ վաշխառու. ամէքը պարտ էին

նրան: Նրա փարաւոնեան սեփական կառքը, թանկագին նժուգները, 500 բուբլիանոց մուշտակը կենդանի վկայ էին նրա հոչակաւոր հարստութեան:

Հասարակութիւնը շատ պինդ բռնեց Հայրիկի օձիքից, որպէս դպրոցներին աւելի մօտիկ պատասխանատու, և խիստ հաշիւ պահանջեց: Հայրիկը հաշիւ չտւեց և ժողովուրդը կուսակցութեան բաժանւեց: «Արտաքսել Հայրիկին, պաշտպանել, պահել հայրիկին». այս էր կուսակցութեան նիւթը:

ԻԹ.

Գեկտեմբերի 15 էր: Չմեռւայ կատաղի և անգութ ժամանակը: Ինչպէս ժողովուրդը ասում է, երկինք գետինք ցրտի ձեռից կուչ էր եկել: Թքէիլը գետին չէր ընկնիլ, երկիրը ճքճքում էր և հազարաւոր տեղից ճեղքւում: Երեկոյեան ժամը 11-ին, իբր ամէքը փափուկ և տաք անկողինների մէջ հանգստանում էին, երկու գիւղական սալ ճզճզալով կանգ առաւ Կ. քաղաքի տէր Աւագի դռանը: Սալերի մէջ հին ցնցոտիներով ծածկւած էր ցրտահարւած գերդաստանը. որի հալածւած հայրը սառցէ ընչացքներով, ձիւնապատ միրուքով, քշում էր առաջին սալը:

որը խսկոյն ցած իջաւ սալլից և սկսեց արագ արագ
բաղխել դուռը:

—Ո՛վ է, ձայն տուեց տէր Աւագը ներսից:

—«Ես եմ:

—Գու ո՞վ ես, ի՞նչ ես ուզում այս կէս գի-
շերին:

—Չայնիցս չէս ճանաչում տէր Հայր. տէր
Մարկոսն եմ:

Տէր Աւագը իւր վաղեմի ծանօթի անունը լսե-
լուն պէս՝ դուռը բաց արեց և տեսաւ իւր առաջ
կանգնած մի ձնակոլոլ-մի սառցեղէն կենդանի:
Կրակները վառւեցան, բոլոր ընտանիքը արթնա-
ցաւ, ամեքը դուրս վազեցին, ամենից առաջ ցրտա-
հարուած սառցակոլոլ որբերին, ոսկոր ու մորթ
պառուսին ներս հասցրին և առարկաները ներս
կրեցին: Խեղճ պառուսի լեզուն ցրտից չորացել էր
բերանի մէջ, ձեռքերը կապտել-մեռելի չանկեր
էր դառել:

Ինքնաեռ պատրաստեցաւ, վառարանները
տաքացաւ, թէլից յետոյ ջրալի տաք կերակուրներ
առաջ բերին. սեղանի վրայ գինի, օղի դրին: Փո-
քըր ժամանակից յետոյ հիւրերի սառած մարմին-
ները տաքացաւ, բերանների մէջ փետացած պա-
պանձած լեզուները կամաց կամաց շարժեցին:

Ա սխտեցաւ ընթրիքի հետ խօսակցութիւնը:

—Բարով եկաք, տէր Հայր, օղիի բաժակը
ձեռին, սկսեց տէր Աւագը, քաշածներդ սպաշ-
խարանք. քեզ արքայութիւն Նանի, սպրիք
աղջկներ. . .

Ամեքն էլ կարգով մի մի բաժակ օղի խմե-
ցին, միմեանց օրհնեցին, միմեանցից շնորհակալ
եղան և վայելեցին ընթրիքը:

—Գէ, պատմիր տեսնիմ, Տէր Հայր, ի՞նչ կայ
ի՞նչ չկայ. ասաց տէր Աւագը: Քս վերջին նա-
մակը ստացել եմ և ինչ որ հարկաւոր է, կար-
գադրել եմ. բայց ձեռ նամակից երևում էր, որ
դուք անցեալ կիւրակի այստեղ պիտի լինէիք
ինչու այսքան ուշացաք:

—Ճշմարիտ է, տէր Հայր, բայց Արարչի ան-
ջաջողութիւնները ամեն քայլափոխում թափուում
են իմ գլխին: Զմեռը սալլով ճանապարհ զնա-
յր դժոխքի չարչարանքից էլ վառ է. մի օրւայ
ճանապարհը չորս օր է տևում: Ծանապարհը
կորցրինք, սալլը շուռ եկաւ, քիչ մնաց բուքի
տակ ըլլորս էլ խեղդւէինք. եղները յոգնեցին, . .
էհ՛, ի՞նչ ասեմ. տէր Հայր. որ մէկը պատմեմ,
ցաւերս անթիւ են և ամբուժելի, աշխարհի մէջ
ամենաթշուառ արարածն եմ, որ այսպիսի ժա-
մանակ, երբ հաւը թառ ունի, օձը ծակ, գայլը

բուն, աղուէսը որջ, իսկ ես անտուն, անտէր չողերը ընկած, դունէ դուռ թափառում եմ, պատասխանեց տէր Մարկոսը, և, աղլուխը աչքերին դրած երեխայի պէս լաց եղաւ և բոլորին լացացրեց:

— Հանգիստ կացեք, տէր Հայր, աշխահոս ինքքն ըստ ինքեան ցաւ է, և այդ ցաւը աշխարհիս մարդկանց համար է. մի օր դու պիտի քաշես, մի օր ես . . . միտիթարեց տէր Աւագը:

— Ծշմարիտ է, աշխարհիս ցաւերին աշխարհի մարդը մասնակից պիտի լինի, բայց ոչ թէ ամբողջ աշխարհի ցաւը միայն մի մարդ պիտի տանի:

— Ինչ և իցէ, տէր Հայր, անցեալը անցել է, քո քաշած բոլոր նեղութիւնների հետ ես ծանօթ եմ: Այժմ դու ինձ այս աստ. Հոգևոր Իշխանութիւնից հրաման ունիս այս տեղ գալուդ համար:

— Լիակատար հրաման չունիմ, թղթի մէջ ասած է. «Տէր Մարկոսը իրաւունք ունի Կ. քաղաքում բնակւելու, եթէ տեղական քահանաները, ժողովուրդը և առաջնորդը կ'համաձայնին»: Այսքանն էլ չէին գրիլ, եթէ ձեր բարեկամական եռանդոտ միջնորդութիւնը և նամակ-

ները չլինէին: Զեր դրած նամակին համաձայն՝ բերաններն էլ անուշացրի: Այժմ, յոյսս Զեր վրայ դրած, որբերիս ձեռքից բռնած, դիմել եմ Զեր հայրական զթութեան և Զեր օգնութեան, ինչպէս ուզում էք, այնպէս վարւեցէք. ես այժմ մի անտուն, անտէր և անօգնական մարդ եմ: Զեզանից եմ սպասում, կամ կեանք, կամ մահ:

— Սիրտդ հանգիստ պահիր, համբերող եղիր, յայտ դարձեալ Աստու վրայ դիր, ամեն բան լաւ կ'լինի: Իմ տունը քո տունն է, մի ամբողջ տարի դու քո գերդաստանով լիակատար իրաւունք ունիս իմ տան մէջ ապրելու, մինչև ջուրը ճանապարհ ընկնի: Հիմայ ժամանակը անցել է, ոչ տուն կարող ես վարձել, ոչ վառելիք գրտնել. քաղաքում ջուրը մինչև անգամ փողով է:

— Դու ես իմ փրկիչը, Հայր, դու ես իմ ազատարարը, ես քո ծառան եմ. քո գերին եմ, քո հրամաններին ամենահլու և պատրաստական ծառայ եմ:

— Մենք եղբայր ենք, տէր Հայր, հին բարեկամ ենք. դուք բոլորովին միամիտ կացէք: Այժմ յոգնած էք, վերկացէք, ձեզ համար պատրաստած տեղաշարի մէջ հանգստացէք, լետոյ շատ խօսելու բաներ կան:

Վերկացան բոլորը քնեցին: Բայց վշտերի հալածանքների ովկիանոսի մէջ ընկած տէր Մարկոսը մինչև լոյս «նխ, վնխ- օՖ...» հառաջանքներով լուսացրեց:

Լ.

Տէր Աւագը ինքը գիւղացի էր և շատ ժամանակ չէր, որ ամբողջ գերգաստանով տեղափոխուել էր քաղաք: Նրա գերգաստանը բազմաթիւ էր, 7 հարս, մի կեսուր կար տանը. վեց եղբայր ունէր. որոնք պարապում էին երկրագործութեամբ և լիացնում 50 անհատից բաղկացած օջաղը և բազմաթիւ հիւրերին: Երկու գութանի եզ ունէին, 50 կով էին կթում, ոչխարի հօտը առանձին էր: Օրը չորս անգամ թոնիրը կ վառւէր հաց կ թխէր: Գնացող գալող հիւրերին հաշիւ-համար չկար: Բառի բուն նշանակութեամբ անտէր հիւրանոց էր, ձրի իջևան: Թուրքն էլ, քուրդն էլ, ծանօթն էլ, անծանօթն էլ... մտնում, ելնում, ուտում, խմում, շաբաթներով և ամիսներով մնում և մինչև անգամ առանց տեղեկութիւն տալու, առանց մնաս բարով ասելու թողնում, գնում: Հացի սեղանտախտակը առաւօտից մինչև կէս գիշեր միշտ պատրաստ էր: Հնգարաւոր աղքատ-

ներ և կարօտեալներ գրանց տան յարկի տակ կ կերակուէին և իրանց աղքատ գերգաստանի բաժինը էլ կ տանէին, որը ալիւր, որը եզ, որը պանիր, որը տաք կերակուր. և որը հին հագնելիքներ: Ամբողջ քաղաքացւոց յայտնի էր այս տունը իւր նահապետական պարզ ձևերով և իւր օրինակելի հիւրասիրութեամբ:

ԼԱ.

Երեք օրից յետոյ տէր Աւագը Տէր Մարկոսին ներկայացրեց տեղական առաջնորդին—Հայրիկին, որին մի օր յառաջ տէր Աւագը, իբրև աջհամբույր հարիւր մանէթ, մի գլուխ շաքար և մի խաս անթարացու ներկայացրել էր և բոլոր հանգամանքները մանրամասնաբար պատմել,

—Սրբազան Հայր, ահա սա է այն քահանան, որի մասին ես ձեզ հետ առաջուց խօսել եմ և որը ահա անձամբ ներկայացնում եմ ձեզ՝ ձեր հայրական օրհնութիւնը առնելու համար:

—Տէր Մարկոս Հայր, ասաց Հայրիկը, Ձեր մասին Հոգււոր Իշխանութիւնը ինձ ևս մի թուղթ է գրել: Սյդ թղթի զօրութիւնն այն է, որ մենք պիտի քահանաների և հասարակութեան գրաւոր համաձայնութիւնը առնինք, որ կարելի լինի Ձեզ պաշտօն տալ այս տեղ:

— Այդ բոլորը ես յանձն եմ առնում, Սրբազան Հայր, խոստացաւ Տէր Աւագը. մեր խնդիրը Ձեզանից միայն այս է, որ այդ թղթերը դուք վաւերացնէք, կնքէք և ուղարկէք:

— Այդ էլ ես եմ յանձն առնում, խոստացաւ Հայրիկը. դէ, դնացէք, գործերդ տեսէք:

Տէր Աւագը երեք օրուայ մէջ բոլոր քահանաներից և ժողովրդի մեծամասնութիւնից մի համաձայնութեան թուղթ առաւ, որով յօժարութիւն էին յայտնում Տէր Վարկոսին իրանց մէջ քահանայութիւն անելու: Հայրիկը այդ թղթերը կնքեց, վաւերացրեց, ուղարկեց ուր հարկն էր և Տէր Վարկոսին գրաւոր հրաման տւեց քահանայութիւն անելու:

— Տէր Վարկոս Հայր, ես իմ մարդկային պարտքս կատարեցի, ասաց Տէր Աւագը, ամեն բան կարգի ընկաւ, այսուհետև դուք հանդիստ շարունակեցէք ձեր գործերը: Միայն ես քեզ բարեկամաբար մի բանի մէջ, պիտի նախագողջացնեմ: Այս քաղաքի մէջ ահա համարեա մի մի տարի է, որ ժողովուրդը բաժանւած է երկու միմեանց հակառակ կուսակցութեան: Մէկ կուսակցութեան պարագլուխը մեր Սրբազանն է մի քանի աննշան կուսակիցներով, իւր արբանեակ-

ներով, կոկ միւս կուսակցութիւնը ամբողջ ժողովուրդն է: Աերջիններս հաշիւ են պահանջում. առաջինները մերժում են. վերջիններս աշխատում են արտաքսել տալ քաղաքից, իսկ առաջինները ջանք են անում պահել պաշտպանել: Մենք քահանայ ենք. մեր պարտքն է մեր ժողովրդի մէջ խաղաղութիւն սերմանել, հաշտութիւն քարոզել և իրաւունք չունինք այս կամ այն կուսակցութեան պատկանելու: Մանաւանդ դու, որ մի օտար նորեկ քահանայ ես, բոլորովին քեզ չեզոք պիտի պահպանես և միայն քո անձնական գործերին պիտի հետևիս: Այս է իմ բարեկամական խրատը, խորհուրդը և խնդիրը: Սյնպէս արա, որ նորից փորձանքի մէջ չընկնիս:

— Շնտ, շնտ շնորհակալ եմ, Տէր Աւագ Հայր, դուք ոչ թէ խնդրելու, այլ ուղղակի հրամայելու իրաւունք ունիք: Մի՛թէ դժոխքը ուղարկէք, ես իրաւունք չունիմ ձայն-ձայտուն հանելու:

ԼԲ.

Անցան օրեր: Տէր Վարկոսը բաւական զարթոյթացել էր, բաւականին ծուխ ունէր, գործը շատ յաջող, միայն աշխատում էր, բացի սպրուստ ունենալուց, հեղինակութիւն ևս ձեռք բերել,

քաղաքի առաջաւոր մարդկերանց գրաւել, մասնաւանդ սիրելի գառնալ Սրբազանին: Նախանձութիւնից կատաղում էր, երբ Սրբազանը մի քահանայի արժանաւորութեան մասին զովեստներ էր տալիս, իսկ իւր մասին գաղափար անգամ չուներ:

— «Սրբազան Հայր, մէկ օր ասաց Տէր Մարկոսը, մատնութիւնը շատ պախարակելի գործ է, բայց երբ գործը վերաբերում է իմ բարերարին, ես չեմ կարող լուել: Արեւի մի տեղ ժողոված էին քո հակառակորդները, խնդրազիր էին պատրաստում Հոգևոր Իշխանութեան տալու: Խնդրազրի մէջ այնպիսի անպատկառ զրպարտութիւններ էին շարահիւսել քո մասին, որ մարդու վրա ուղղակի զգուանք էին բերում: Որովհետև դուք ինձ կատարեալ բարերար հանդիսացաք իմ նեղութեան ժամանակ, այդ պատճառով չափազանց վշտացրեց ինձ այդ խնդրագիրը:

Հայրիկը զարմացաւ, տեսնելով անձանօթ Տէր Մարկոսի մէջ այդչափ ազնւութիւն և այդչափ երախտագիտական զգացում, չհասկանալով նրա ներքին բուն նպատակը:

— Եսա շնորհակալ եմ, Տէր Հայր, որ այդքան բարի էք դէպի ինձ. ես վաղուց կցանկանայի քեզ պէս խօսակից ընկեր ունենալ, բայց դեռ

փորձում էի քո բնաւորութիւնը: Ուրեմն այսուհետև դու ազատ մուտք ունիս ինձ մօտ, և ես պիտի հովանաւորեմ քեզ և ամեն գործում աջակցեմ:

Տէր Մարկոսին էլ այդ էր հարկաւոր: Ամբողջ օրը քաղաքի ամեն քունջ ու պուճախում մանրամասնաբար թափառելուց յետոյ, երեկոյեան միժամը պարկելով ու ջլալներով բեռնաւորուած կհասնէր Հայրիկի մօտ և կգատարկէր պոչաւոր ստերի, մանր մունը ճշմարտութիւնների պարկերը ու տուրակները:

Սրբազան Հայր, այսօր մի տեղ խօսում էին Ձեր քարոզների վրա, բոլորին հիացրել են, ձեր քարոզած մտքերը, ձեր քաղցր և գրաւիչ լեզուն, ձեր չորդառատ բառերը, միանգամայն սրտաշարժում և արտասուեցնում են լինողներին:

— Սրբազանը հիանում էր տէր Մարկոսի կեղծ գովեստներից և սկսում էր անցեալից օրինակներ բերելով, իրան գովել-մինչև 7-րդ երկինքը հասցնել:

— Ես ամբողջ 15 տարի շրջեցի պետութեան բոլոր մայրաքաղաքները, գաւառները և շատ գիւղեր: Արբ եկեղեցու մէջ ատենաբանութիւն կսկսէի, օտար յոգեբ անգամ կթափուէին:

— Ափսոս, հաղար ափսոս, որ Ձեզ պէս հրեշտակը ընկել է այդպիսի վայրենի ժողովրդի մէջ:

Տէր Վարկոսը իւր տմարդի շողոքորթութեամբ և շուրջ գովասանութեամբ Հայրիկին լաւ միութարեւուց յետոյ՝ կ'վերագառնար տէր Աւագի տունը, նրանց էլ հաւատացնելով, թէ ծխերի տներն էր:

ԼԳ.

Անցկացաւ մի քանի ժամանակ: Քաղաքի մէջ միմեանց հակառակ կուսակցութիւնը հասել էր ծայրահեղութեան: Հազարաւոր շրշափելի փաստերով ապացուցանում էին Սրբազանի հաղարաւոր հակամարդկային զեղծումները, կաշառակերութեամբ կատարած ապօրինի գործերը և ցոյց էին տալիս, որ, թէ քաղաքի գալոցների և թէ այլ զանազան բարեգործական նպատակով հաւաքած գումարները դառել են պ. Ազգասէրի համար հոյակապ տներ, իսկ Սրբազանի համար ոսկիներ:

— Աչքդ լոյս, տէր Վարկոս, տէր Աւագի գործերը յաջող են, իշխանութիւնից հարցրել են ինձ նրա գիտութեան, վարուց բարուց մասին սրահանջել են ցուցակ ծառայութիւնը և իմ հաճութիւնը առնելուց յետոյ՝ Հոգևոր Կառավարութեան ան-

դամ պիտի նշանակեն:

Այս «աչքալոյսը ոչ միայն չուրախացրեց տէր Վարկոսին, այլ ընդ հակառակը չափազանց գըրգռեց նրա նախանձը և թշնամութեան մտածմունքներ առաջ բերեց նրա մէջ: Բայց արհեստական կեղծ ժպիտով վարագուրեց իւր ներքին յուզմունքը:

— Շտապեմ տէր Աւագին «աչքալոյս» ասելու, Սրբազան, ասեց տէր Վարկոսը և իսկոյն դուրս ելաւ:

Մի քանի ժամից յետոյ Սրբազանը ստացաւ մի անձանօթի ձեռքով հետևեալ անստորագիր նամակը:

— «Սրբազան Հայր, դու շատ միամիտ մարդ ես, քո բարեկամ ու թշնամին չես ճանաչում: Քաղաքի մէջ եղած խռովութեան գլխաւոր պատճառը տէր Աւագն է, որ իւր հարստութեամբ շատերին գրաւում է: Նրանց տանը շատ գործեր է կատարում. եթէ տէր Վարկոսի թոյլ տամարը գտնիս, նա քեզ ամեն բան կ'ասի»:

Սրբազանը նամակը կարդալուց յետոյ՝ ծառային հրամայեց, ուր որ լինի տէր Վարկոսին գտնել:

Մէկ ժամից յետոյ տէր Վարկոսը մտաւ Սրբազանի մօտ.

—Տէր Աւագին բան ասիր:

—Ոչ, Սրբազան, լանկարծակի գործ պատահեցաւ:

—Շատ լաւ, որ դեռ չես ասել: Առ, կարգատաւ նամակը

Տ. Մարկոսը կարդալուց յետոյ զարմացման ցոյցեր էր անում:

—Չարմանալու ոչինչ չկայ, ահա այս խաչը և աւետարանը դնում եմ ձեր առաջ և հրամայում եմ. համբուրիր և երդւիր, որ սուտ չ կարողանաս ասել, և ինչ որ գիտես ինձանից չ ծածկես:

Տիրեց խորին լռութիւն: Կեղծ նամակը ինքը տէր Մարկոսն էր գրել, որ Սրբազանի միտքը պղտորի և ինքը պաշտօն ստանայ: Չար նախանձութիւնը և երախտագիտութիւնը կատաղի պատերազմ էին սկսել տէր Մարկոսի դէմ:

—Ինչո՞ւ չես խօսում, տէր տէր, բան եմ հարցնում քեզ, չե՞ս լսում:

—Լսում եմ, Սրբազան, միայն մտածում եմ, չգիտեմ աշխարհիս ճշմարտութեան ծառայեմ ու սոված մեռնիմ, թէ ստութեան ծառայեմ, հարստանամ ու ապրիմ:

—Ես չեմ հասկանում, պարզ ասա:

—Պարզը այս է, որ եթէ ճշմարիտն ասեմ, վաղը տէր Աւագը ինձ և իմ գերդաստանը իւր

տանից դուրս կանի, և ծխերս էլ ձեռիցս կառնի, կ'մնամ սոված. իսկ եթէ քեզ խաբեմ, Տէր Աւագին գովեմ, երկար ժամանակ նրա տանը ձրի կապրիմ ու կ'հարստանամ:

—Ծուխ տուղն էլ ես եմ, առնողն էլ ես եմ, քաղաքից դուրս անողն էլ ես եմ, նա թնչ իրաւունք ունի. իսկ եթէ տանից դուրս կանի, եկեղեցապատկան տներից մէկը ձրի կ'լանձնեմ քեզ, բնակւի, ինչքան կ'ամենաս:

—Սրբազան Հայր. ես ճշմարտութեան համար միշտ հալածւած եմ եղել և ճշմարտութեան համար էլ պիտի մեռնիմ:

—Ինչ սր ես եկել եմ Տէր Աւագի տունը, մի 20 անգամ ձեր հակառակորդները այնտեղ ժողով կազմել են և բոլոր խնդրագրիներէ Սեբըր Տէր Աւագն է անում:

—Ինչո՞ւ մինչև հիմայ ամեն բան ինձ ասում էիր, իսկ դրա մասին ոչինչ չէիր ասում:

—Ի՞նչ ասէի, Սրբազան, թնչպէս ասէի, արքանց տանը մնում եմ, նրանց հացը ուտում եմ: Հիմայ էլ չէի ասիլ, եթէ այդ խաչ ու աւետարանը մէջ տեղը չգնէիր և չերգմնեցնէիր:

—Եթէ այդպէս է, եկած թղթերի մասին Տէր Աւագին ոչինչ բան չասես, ես նրա աւագ քահանայութիւնը կ'ընացնեմ, իսկ Հոգեւոր Կա-

ուսովարութեան անդամ կառաջարկեմ քեզ, որ այդպէս հաւատարիմ ծառայում ես ինձ: Քեզ դեռ շատ պարգևներ արժան է:

ԼԳ.

«Յձը առաջ տաքացնողին կը կծի» ասում է հասարակական առածը: Տէր Մարկոսը իւր սառած մարմինը տաքացած տեսնելով, առաջին թոյնը իւր բարերարի իւր տաքացնողի վրայ թափեց:

Անցկացաւ մի ժամանակ, Տէր Մարկոսը Տէր Աւագի հաճութիւնը նախապէս առնելուց յետոյ, տեղափոխուեցաւ Սրբազանի ցոյց տւած տունը, մէկ տարի չորս ամիս Տէր Աւագի տանը ձրի կերակրուելուց յետոյ:

— Մնաս բարով, ասաց Տէր Մարկոսը, կեղծ արտասուքը աչքերին: 16 ամիս դուք ինձ և իմ գերդաստանը հալըբար կերակրեցիք, մեզ մահուանից ազատեցիք, այժմ խնդրումեմ Արարչից, որ ինձ այնքան միջոց ու կեանք տայ, որ կարողանամ ձեր անթիւ բարութեանց գոնէ մի հազարերորդ մասը վճարել:

— Գնաս բարով, Տէր Հայր, զարձեալ մեր տունը ձեր տունն է, չմոռանաք, շուտ շուտ եկէք, գնացէք:

— Եթէ ես մոռանամ ձեզ, թող Աստուած էլ մոռանայ ինձ, էլ ուրիշ ոչինչ չունիմ ասելու:

Տէր Աւագը համբուրեց Տէր Մարկոսին և ճանապարհ քցեց:

Տէր Մարկոսը, Տէր Աւագի տնից հեռանալուց մի քանի շաբաթ յետոյ՝ Հոգևոր Կառավարութեան անդամ նշանակուեցաւ. և սկսեց ամենատերտ բարեկամութիւն Սրբազանի հետ: Նա շատ ուշ ուշ էր գալիս Տէր Աւագի տունը և ամեն բան թաղցնում էր նրանից և առհասարակ սառն էր երևում: Այդ օրւանից Տէր Մարկոսը կորցրեց իւր ձեռք բերած համակրութիւնը. Տէր Աւագի վրայ զբած անստորագիր նամակը հաստատուեցաւ նրա վրայ. պարզուեցաւ բոլոր խարդախութիւնը և յայտնի եղաւ թէ թնչ ճանապարհով Հոգևոր Կառավարութեան անդամ էր դառել: Վերջապէս ամեքը հասկացան, որ դառի մորթու տակ ծածկուած է մի զիշատիչ գաղան, մի դաւաճան, մի մատնիչ և առհասարակ վարք ու բարքով ապականուած մի տղեղ արարած: Բոլոր ծխերը տոմսակներով յայտնեցին, որ իրաւունք չունենայ էլ իրանց տները ոտք կոխելու: Դրանից յետոյ էլ մի քանի անգամ բռնուեցաւ խոշոր անբարոյականութեանց մէջ և խայտառակուեցաւ: Ժողովուրդը իւր զէնքերը ուղղեց դէպի Տէր Մարկոսին ևս:

ԼԵ.

18. 2. . թուականի մայիսի 20-ին, Հոգևոր իշխանութիւնը արգարացի գտնելով Սրբազանի և Տէր Վարկոսի դէմ ժողովրդի տւած խնդրագրերը՝ երկուսին էլ հեռացրեց քաղաքից: Առաջինը աքսորւեցաւ մի անմարդաբնակ անապատ, մի աւերակ վանքի մէջ, երկու տարի ապաշխարելու համար, իսկ Տէր Վարկոսին տեղափոխեցին Ա. քաղաքը և յանձնեցին առժամանակեայ կերպով մի հոչակաւոր քահանայի հսկողութեան մինչ ց կարգադրութիւն:

ԼԶ.

«Ատու՛մ են մեր քաղաքում մի շատ գիտնական քահանայ են բերել, պատմում էին միմեանց Ա. քաղաքի պառաւները: Այնքան գիտնական է, այնքան գիտնական է, որ կատարեալ իմաստուն Սողոմոն»: Տէր Վարկոսը Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ, գտանւում էր Տէր Դաւթի հսկողութեան տակ: Տէր Դաւթը իւր գիտութեամբ, փորձառութեամբ, ճարպիկութեամբ միանգամայն զբաւել էր Հոգևոր բարձրագոյն իշխանութեան համակրութիւնը: Տէր Դաւթի

անմիջական իշխանութեան տակ գտանւում էր ամբողջ վիճակի և քաղաքի հոգևոր գործերը և եկեղեցական, դպրոցական և առհասարակ ազգային ամեն տեսակ հաշիւները: Տէր Դաւթի ամեն տեսակ առաջարկութիւնները հոգևոր իշխանութեան մօտ չարգելի էր և անյետաձգելի: Ահա այսպիսի հօր իշխանութեան տակ Տէր Վարկոսը հովանաւորւեցաւ և քաղաքի պատւաւոր շրջանում, կարճ ժամանակից լետոյ, ընդունելութիւն գտաւ: Տէր Վարկոսը Տէր Դաւթի որդեգիրն էր ուսանողութեան ժամանակ: Ամբողջ եօթը տարի Տէր Վարկոսը սովորում էր Տէր Դաւթի հաշուով. նոյն իսկ քահանայ ձեռնադրելու առաջին պատճառը դարձեալ Տէր Դաւթին էր: Այդ պատճառով այսօր այս հայրածանքի ժամանակ, հոգևոր իշխանութեան մօտ երաշխաւոր լինելով, առաջին անգամ դարձեալ Տէր Դաւթը իւր հայրական ձեռքը կարկառեց դէպի իւր անպաշտպան որդեգիրը:

— Իմ տնկած ծառն է, մտածում էր Տէր Դաւթը, պէտք է պահպանել, որ օտարները արմատահան չանեն.

— Իմ փրկիչս դու ես, ես մի անբախտ արարած եմ, դու հաղարաւոր փորձանքներից ինձ ազատել ես, այժմ ամենից հայրաձեռն ընկնում եմ քո ոտքերի տակ և խնդրում քո օգնութիւնը, աղաչում էր Տէր Վարկոսը:

Ես իմ օգնութիւնը չեմ խնայիլ քեզանից»
եթէ գգոյշ կ'սկսէս քեզ. և եթէ առանց իմ
գիտութեան բան չես անի:

— Երբևայնուամբ Ստտուծոյ անունով, որ ես
սիրտի լինիմ քո կատարեալ գերին:

ԼԵ.

Ա. քաղաքի մէջ երկար ժամանակ բոր-
բոքում էր մի կատաղի կուսակցութիւն: Կուսակ-
ցութիւնը Տէր Դաւթի դէմ էր: Հակառակու-
թականները ամեն ջանք թափում էին պաշտօնից
հեռացնել Տէր Դաւթին, որովհետև դրանց
կարծիքով նա «վիճակը կողոպտում է, եկեղեցա-
կան և ազգային գրամագլուխները վատնում է,
իւր օգտին է ծառայեցնում և հաշիւ չի տա-
լիս»:

Տարին 20 անգամ ժողովներ կ'կազմէին,
Տէր Դաւթին տապալելու համար. բողոքագիր
բողոքագրի ետևից կ'թափէին հոգևոր ատեան-
ներում, պատգամաւորներ կուղարկէին, բայց
Տէր Դաւթի ինքնը համբերելուց յետոյ՝ հակա-
ռակորդների մի տարւայ աշխատանքն ու կազմած
բոլոր ծրագիրները, մէկ ընդմեջ, մի թեթև
բացատրութեամբ կ'ոչնչացնէր և նոր նոր պար-

գւեներ կտանար, որպէս հոգևոր իշխանութեան
ամենահաւատարիմ ծառայ և ամենաարդիւնաւոր
գործակալ:

ԼԸ.

Անցկացաւ մի ամբողջ տարի: Տէր Մարկոսը
բաւականին տաքացել էր: Սոված փորը կրկին
կշտացրել, կախ գլուխը բարձրացրել, քիթը տնկել,
նոր նոր բարեկամներ ու պաշտպաններ ճարել:
Վերջապէս ամեն բան յաջող էր, բայց կատաղի
նախանձը եռ էր գալիս նրա ապերախտ սրտի
մէջ:

Երանի, հազար երանի Տէր Դաւթին, ամեն
րուպէ կրկնում էր Տէր Մարկոսը: Ոչ խելք ունի
և ոչ գիտութիւն, բայց զարմանալի բախտաւոր
մարդ է, որ ամբողջ քաղաքի վիճակի հոգևոր գոր-
ծերի իրաւունքները դրան են յանձնել: Քուսանայ
բախտը, որ մի օր էլ մեզ չի տեսնում:

Երբ որ լսում էր թէ քաղաքացիք դարձեալ
ժողով են կազմել, Տէր Դաւթի վրա կրկին բողո-
քագիր են ուղարկել և հաշիւ են պահանջում,
չափազանց ուրախանում էր. որովհետև ինքը այն-
պէս էր համոզւած, որ Տէր Դաւթին պաշտօնից
հեռացնելուց յետոյ, նրա փափուկ աթոռի վրա
իրան կ'բազմեցնեն. այդ պատճառով նա սրտով

ցանկանում էր Տէր Գաւթի յաղթւելը. թէև իւր սատանայական վարպետութեամբ կեղծ ու խարդախ ձևերով միշտ անձնանուէր բարեկամ էր ցոյց տալիս իրան Տէր Գաւթին:

— Գիտէ՞ք ինչ կայ, Տէր Գաւթի Հայր, ձեր Հակառակորդները ինձ վրա կասկածում են, շատ բան ինձանից թագցնում են: Հարկաւոր է դրանց խաբել և դրանց բոլոր գաղտնիքները դուրս քաշել: Ես այսպէս եմ մտածել. այսուհետև ձեզ մօտ միժանը կ գամ, որ ոչ ոք չնկատէ. իսկ նրանց կ հաւատացնեմ, որ իմ յարաբերութիւնը կտրել եմ քեզանից: Ետտ անգամ էլ ձեզ գրաւոր տեղեկութիւն կտամ. և այսուհետև նրանց մօտ, ժողովներում ամեն տեղ թշնամաբար կխօսիմ, որ նրանք ամեն դէպքում ինձ հաւատան: Ուրեմն այսուհետև եթէ ինձանից մի վատ խօսք լսես, հասկացիր հոգւով սրտով՝ բարեկամիդ և կեղծ թշնամուդ նպատակը:

«Շատ գեղեցիկ ծրագիր է, համաձայն եմ. միայն զգուշ կաց, նրանց մէջ աղուէս մարդիք շատ կան, ամեն բան հալած իւրի տեղ չեն ընդունի:

Այս դաշնադրութիւնից յետոյ Տէր Մարկոսը արձակ համարձակ գործում էր Տէր Գաւթի Հակառակորդների հետ, և երբեմն երբեմն գիշերները ծածուկ հանդիպում էր Տէր Գաւթին և հաղոր-

դում էր նրան այնպիսի տեղեկութիւններ, որ ինքն ըստ ինքեան պիտի տարածւէր, և կամ արդէն Տէր Գաւթի թը գիտէր:

— Ստում են անցեալ օրը ծածուկ մարդ են ուղարկել բարձրագոյն հոգևոր իշխանութեան, այդ իրաւ է, հարցրեց մէկ անգամ Տէր Գաւթի թը Տէր Մարկոսին:

— Սուտ է, մի հաւատար, պատասխանեց Տէր Մարկոսը, եթէ այդպիսի մի բան լինէր, անկարելի էր որ ես չ գիտենայի:

Խնդրագիրը ինքը Տէր Մարկոսն էր գրել և ուրիշը արտագրել: Ինքը հիւանդ լինելու պատճառով, խնդրի սևագրութիւնը ուղարկել էր իւր բարեկամին և մի տոմսակով խնդրել էր արտագրելուց յետոյ սևագրութիւնը պատուտել: Բայց տոմսակաբեր ծառան այդ թղթերը սխալմամբ հասցրել էր Տէր Գաւթիին:

Տէր Գաւթի թը այնքան դիւրահաւան և ամեն բան միամտաբար հալած իւրի տեղ ընդունողներից չէր: Սմենահաւատարիմ բարեկամին էլ մի գործ յանձնած ժամանակ դարձեալ քայլ առ քայլ հետևում էր նրան: Չշմարիտ է Տէր Մարկոսի հետ դաշնադրութիւն կապեցին. բայց և այնպէս Տէր Մարկոսի բոլոր շարժողութիւնները առանց հետախուզութեան չէր թողնում:

ԼԹ.

— Երեկոյեան ժամը 11-ին Տէր Գաւթի տանը ժողոված էին 30-ի չափ ամենամոլեռանդ Տէր Գաւթականներ: Երկար խօսակցութիւնից լետոյ դրեցաւ ընթրիքի սեղանը, որի վրա դարսած շուալլ պատրաստութիւնից երևում էր, որ լաւ քէֆ պիտի անեն:

Ամեքը շրջապատեցին սեղանը և իւրաքանչիւրը բռնեց իւր պատշաճաւոր տեղը:

— Պարոններ, գի՛նու լի բաժակը ձեռին օտի կանգնեց Տէր Գաւթիքը, մի գազանիք ունիմ ձեզ հաղորդելու. ուրեմն դեռ ոչ ոք իրաւունք չունի հաց ուտելու: Ես կեղծ բարեկամին հաց չեմ տալ և նրա հացը չեմ ուտի: Աշխարհիս մէջ Յուդայից էլ գարշելի է այն մարդը, որ երեսանց բարեկամութիւն կանէ, բայց իսկապէս ամենավտանգաւոր թշնամի է: Թող կործանւին, ջնջւին այդպիսի երախտամոռ փարիսեցիները: Այստեղ նըստողներից մէկը դաւաճանել է իւր ուխտը. նա իրաւունք չունի այսօր իմ հացը ուտելու:

Սեղանակիցները շփոթւած միմեանց երես են նայում, բայց կասկածաւոր մարդ չեն գտնում:

— Ես ինդրում եմ, շարունակեց Տէր Գաւթիքը, ս'վ որ զգում է թէ ինքը իւր բարերարի դէմ յան-

ցաւոր է, բարեկամութան դէմ չարագործութիւն է արել, առանց մատնացոյց լինելու թող վեր կենայ հեռանայ իմ տնից:

Ամեքը իրար երես են նայում, բայց ոչ ոք տեղից չի շարժւում:

— Տէր Հալը, ասաց սեղանակիցներից մէկը, ներողութիւն մի բան հարցնել, հաստատ փոստ ունիս ձեռիդ, թէ միայն լսածիդ էս հաւատում:

— Խո՛նչ փաստ է հարկաւոր, մթթէ էս զրօւարտութիւն պիտի անեմ:

— Ի հարկէ զրպարտութիւն չես անի, միջամտեց Տէր Մարկոսը, միայն ամեն մարդու ասածին չպէտքէ հաւատալ. կարելի է մեզանից մէկի թշնամին ուզում է մեր վարկը կտարել քո առաջ:

— Շատ լաւ, ուրեմն գրաւոր փոստ կուզէք, ասաց Տէր Գաւթիքը, և ծոցից հանեց երկու տոմոսկներ. — դէ, լսեցէք, կարգում եմ:

«Մեծապատիւ Գ. Աղայ. — Ահա՛ ուղարկումեմ Տէր Գաւթի վրա շարագրածս բողոքագիրը, շուտով արտագրել տւէք և իմ սևագրութիւնը պատըտեցէք: Անցեալ երեկոյ էս Տէր Գաւթի տանն էի, այնտեղ էին իւր նման մի քանի գողեր ու աւազակներ, որոնց հետ անուշ է անում մեր զպրոցի գումարները: Պատրաստութիւն էին տեսնում վիճակը մարդ ուղարկելու և շնորհակալութեան

Թերթ գուրս բերելու Տէր Դաւթի Համար: Ես մի նամակ գրեցի փեսիս և մի քանի նամակներ էլ ուրիշ գիւղեր եմ գրել, որ արգելք լինին: Այս բանը իմաց տւէք մեր բոլոր կուսակիցներին, որ գիւղերում նամակներով զգուշացնեն: Տկար եմ, այդ պատճառով գրով եմ Հաղորդում:—

Ձեր «ընտրար Տէր Մարչո»:

Սեղանակիցները խառնուան իրար:

—Ստորագրութիւնը յայտնիր, գրողի անունը ասն, գոռում էին բոլորը միասին. պապանձել էր միայն Տէր Մարկոսի լեզուն:

—Դեռ սպասեցէք, սպասեցէք, մինն էլ կարգամ, ասաց Տէր Դաւթիթը և սկսեց Հետեւեալ տոմսակը.—

—Իմ սիրելի փեսայ Գոգոր ջան.—Այս երկու օրս մեր քաղաքից մարդիկ կգան ձեր գիւղը Տէր Դաւթի Համար շնորհակալութեան թղթեր առնելու ժողովրդից, աշխատիր քո բարեկամներով խանգարել:

Ք. Տէր Մարչո:

Այս ընթերցանութեան ժամանակ Տէր Մարկոսը դառել էր սև ածուխ, մկան ծակը Հազար մանէթով կառնէր, բայց չկար: Դաւաճանի կուրծքը արագ արագ բարբախում էր, շնչառութիւնը սաստկանում, քիչ էր մնում կուրծքը պատուի և

ներսը կատարւած կատաղի ալէկոծութիւնը ամեն տեսակ չարագործութեանց Հետ գուրս թավալի: Ոգորմելու լեզուն պապանձել էր բերնի մէջ, կմկմում էր, բայց արդարանալու ոչ մի բառ չէր գտնում:

Թ՛նք ու նախատինք քո երեսին, զարշելի մարդ, դ՛նքս կորի ալստեղից, դ՛նքս, դ՛նքս գոռում էին ամեն կողմից:

Ահն՛ ալսպէս խայտառակւած արտաքսեցին իրանց միջից Յուգալին և ապա իրանք սկսեցին Հացկերութիւնը: Առաջին բաժակը դատարկեցին բոլոր անկեղծ բարեկամների կենացը, ցանկանալով դաւաճանների կործանումը:

Ես.

—Տէր Մարկոս Հայր, էս ինչէր են մոկանում. որպէս թէ անցեալ օրը Տէր Դաւթի տանը Հացկերոյթին քեզ տնից գուրս են արել, Հարցրեց մի Հաստափոր աղայ փողոցի միջին:

—Ի՞նչ Հացկերոյթ, եղբայր, թ՛նչ բան. մարդը ուզում է ուրիշ ձեռքով փուշ քաղել: Ես երկար ժամանակ էր այդտեղ ոտք չէի դրել, այդ օրը կանչել էր, ուրիշ մարդիկ էլ շատ կային. Բերեց քահանաների բերանից կազմած շնորհակալութեան

Թերթը դրեց առաջս, թէ ստորագրիր: Այդտեղ բարկուժիւնս եկաւ, էլ չհամբերեցի, մի քանի լաւ կծու խօսքեր ասացի ու դուրս ելայ:

— Հապսն ասումեն, թէ քո գրած գաղտնի նամակները բռնել են, երեսիդ կարգացել են:

— Հնարել են, մի հաւատար:

Այսպէս խօսակցելով Տէր Մարկոսն ու վերջիշեալ աղան, մի մեծ գարբասի փոքրիկ դռնակից կուզ կենալով ներս մտան մի ընդարձակ բազ, այնտեղից դէպի ձախ ծռւելով մտան մի ընդարձակ դահլիճ, որտեղ Տէր Դաւթի հակառակ կուսակցութիւնը խմբւած, ծրագիր էր կազմում Տէր Դաւթին տասպալելու: Սրանք էլ նստեցին իրանց պատշաճաւոր տեղերը:

— Եղբայր, ամբողջ վիճակը քանդեց, մեր եկեղեցական և դպրոցական բոլոր գումարները ոչնչացրեց, բորբոքւած ճառախօսում էր Տէր Մարկոսը և դեռ երկար պիտի խօսէր, երբ ծառան դրսից մի կնքած փակէտ ներս բերեց, զրեց սեղանի վրա և հեռացաւ: Ժողովի կառավարիչ— քաղաքի գեւորատար իւր հասցէին ուղղած ծրարը բաց անելով, ծածուկ կարգաց և ապշեց: Ծածուկ ցոյց աւեց իւր մօտ նստողներին, շրշնչոյր ընկաւ ժողովականների մէջ:

— Այդ քնչ թուղթ է հարցնում էին հետաքր-

քրւողները. քնչ էք մեզանից ծածուկ պահում, կարգացէք մենք էլ իմանանք:

Ամեն կողմից հարկադրեցին, որ թուղթը կարգացւի:

Լսեցէք, ահա կարգում եմ:

«Բազմերախտ Հայր, Բարձրապատիւ Տէր Դաւթի,

Անցեալ օրը ես ձեզ հետ անձամբ էլ խօսեցի, այժմ էլ ահա գրում եմ. ձեր հակառակորդները ինձ վրա կասկածում են. այսուհետեւ ես ձեզ մօտ կգամ գիշերները, և քո հակառակորդների բոլոր գաղտնիքները քեզ կ հաղորդեմ: Քո հակառակորդների ժողովներում ես քեզ վրայ թշնամաբար կ խօսիմ. գուցէ խօսքը քեզ հասնի, դու հասկացիր իմ նպատակը: Քո գլխի մի մազը ես ամբողջ քաղաքի հետ չեմ փոխի: Ես անխիղճ ու անամօթ մարդ կը լինիմ, եթէ քո երախտիքները ուրանամ և դէպի քեզ հաւատարիմ չլինիմ:

Մինչև մահ քո հաւատարիմ ծառայ և ձեր զերդաստանի համար միշտ աղօթարար
Տէր Մարկոս:

Տէր Դաւթի թը այդ նամակը դիտմամբ էր ուղարկել, որ Տէր Մարկոսի երեսին կարգան և ամեքը հասկանան նրան:

Նամակի ընթերցանութիւնից լետոյ ժողովականները կատաղեցին, գոռում, գոչիւնը ընկաւ դահլիճը. ամեն կողմից նախատական խօսքեր շաղ էին տալիս Տէր Մարկոսի երեսին:

— Տէրտէր, ասաց ժողովականներից մէկը, դու քանի՞ Հոգի ունիս, քանի՞ երես, քանի՞ մըտխալ խիղճ, որքան ամօթ, մարդ ես, թէ սատանայ ես, ամօթ, Հազար ամօթ քեզ:

— Ամօթ և նախատինք քեզ, գոռաց ժողովուրդը և ամեն կողմից աղաղակեցին, «գնւրս, դնւրս, կորիւր, կորիւր . . .»

Տէր Մարկոսի լեզուն բերանի մէջ չըրացել էր, քրտինքը աչքերն էր թափուում. թնչպէս ճեղքէր կատաղած ամբողջը և փախչէր: Չորս կողմը նայում՝ ոչ մի բարեկամ չէր գտնուում, շփոթութեան մէջ տատանուում էր:

Ժողովի կառավարիչը բռնելով Տէր Մարկոսի կունից, մինչև դուռը տարաւ ու դուրս քցեց: Իսկ ժողովականները ետևից թուք ու նախատինք թափելով աղաղակում էին. — «գնւրս, դնւրս կորիւր, կորիւր . . .»

Այս անցքից ամբողջ մէկ ամիս լետոյ, Հազիւ Տէր Մարկոսը գլուխը տանից դուրս Հանեց: Ամբողջ քաղաքի մէջ մի Հատ Հաւատարիմ բարեկամ չունէր, որ ներս մտնէր մի քանի բոպէ խօսակ-

ցութեամբ միխթարէր նրան: Մի ամսեայ ապաշխարանքից լետոյ շաղը փաթաթուած, գաւազանը ձեռին, տնքտնքալով եկեղեցի գնաց, Հիւանդ ձևացնելով:

Խ.

Օրը Կիւրակի էր: Զմեռը իւր կատաղի սառնամանիքները անգթաբար շաղ էր տալիս երկրի վրայ: Քաղաքի մէջ տիրապետում էր արտասովոր կենդանութիւն. ժողովրդի ուրախութիւնը զգալի էր ամէքին. փողոցներում միմեանց պատահած բարեկամները. — «Շնորհաւոր նոր տարի» ասելով՝ հեռանում էին իրարից: Այն, շնորհաւոր նոր տարի, որովհետև յունվարի առաջին առաւօտն էր:

Տէր Մարկոսը շատ գիշերով էր վեր կացել իւր բազմաթիւ այցելուներին ընդունելու, շնորհաւոր նոր տարի բարեմաղթելու: Բայց ժամը 11-էր դառել, դեռ ոչ ոք ներս չէր մտել, մինչդեռ անցեալ տարի, մինչև ժամը 11-ը, Հարիւր Հոգի եկել ու գնացել էին: Երբ Տէր Մարկոսը այսպէս յուսահատ և անմխիթար դրութեան մէջ անիծում էր իւր սև բաղդը, դուռը բացւեց: Ա. քաղաքի Հոգևոր Կառավարութեան ծառան մի կնքած ծրար յանձնեց Տէր Մարկոսին և «շնորհաւոր նոր տարի» ասելով դուրս ելաւ: Տէր Մարկոսը

պաշտօնական ծրարը բաց արեց և կարդաց հետևեալ խիստ հրամանը:

Հրաման

«Օր ըստ օրէ ժողովրդի իրաւացի տրտունջները ձեր անկարգ վարուց և բարուց մասին բազմամալով՝ չափը անցաւ: Զեզ մեղադրում են բազմաթիւ աններելի յանցանքների և նշանաւոր զեղծումների մէջ: Հոգևոր իշխանութիւնը պատշաճաւոր և անաչառ քննութիւններից լետոյ՝ օրինաւոր փաստերով ձեզ վրա հաստատեց հետևեալ աններելի յանցանքները.—

1. Անառակ վարք ու բարքիդ համար ամեն տեղից հալածւեցար:
2. Ս. գիւղացի Աթոյին, կաշառք առնելով պսակեցիր իւր քեռու աղջկայ հետ:
3. Շատ անգամ աշխարհականի հագուստով անառականոցում բռնուեցար:
4. Առանց հրամանի չհաս պսակներ կատարեցիր:
5. Հոգևոր իշխանութեան դէմ ապստամբւեցար, անհնազանդ գտնուեցար և ինքնագլուխ գործեր կատարեցիր:
6. Ամեն տեղ ժողովրդի մէջ խռովութիւն քցեցիր:

7. Եկեղեցու մէջ օրինակատարութեան ժամանակ ծեծեցիր քս պաշտօնակից Ա. քահանային:

Այս բոլոր յանցանքներուդ համար հոգևոր իշխանութիւնը բազմիցս քեզ գրաւոր նախատինքներ գրեց, զանազան ապաշխարանքների ենթակեց, պատիժներ նշանակեց, բայց այնու ամենայնիւ ձեր յանդուգն բնաւորութիւնը ձեր գայթակղեցուցիչ վարք ու բարքը չկարողացաւ ուղղել. ուստի ի զգուշութիւն ամենեցուն վճռուած է այսուհետև քեզ չճանաչել քահանայ, գերծել միրուքդ, և որպէս սոսկ մարդ՝ արձակել ազատ: Այս մասին կհրատարակի բոլոր հայ և ռուս լրագիրներում. շրջաբերականներով կյայանւի ամեն տեղ, որ քեզ այսուհետև ոչ ոք քահանայ չճանաչէ»:

Հոգևոր իշխանութեան այս պաշտօնական հրամանը նոր էր վերջացրել Տէր Մարկոսը և հոգեկան արեկոծութեան մէջ տանջւում էր, երբ հարևանի պառաւը ներս մտնելով ասաց. — «շնորհաւոր նոր տարի» Տէր Տէր ջան:

Սև շնորհաւոր նոր տարի է եկել գլխուս, պատասխանեց Տէր Մարկոսը և ուշաթափւեցաւ:

Պառաւ մայրը և որբերը ներս վազեցին. մօտիկ հարևաններն էլ հաւաքւեցան Տէր Տէրին ուշքի բերին. եղելութիւնը պարզու՝ ջաւ, սուգ ու շիվանը բնկաւ տան մէջ, պառաւը իսկոյն կաթւածահար եղաւ և հոգին աւանդեց:

Հետեւեալ առաւօտը քաղաքական իշխանութիւնը կատարեց Հոգևոր իշխանութեան վճիռը, որից յետոյ մեր բազմաչարչար Տէր Մարկոսը լոկ Մարկոս դառաւ և զիշերը անմիրութիւն փախաւ Տաճկաստան, լանձնելով իւր երկու հասած աղջրկները Ասլան Աղին:

ԽԱ.

Անցաւ 30 տարի: Տաճկաստանի յետ ընկած խուլ գիւղերից մէկում, մի կեղտոտ ախոռի մէջ, անպէտք փախաների վրայ պարկած էր մեր ծերունի և բազմավիշտ Մարկոսը և առաւապում էր անտանելի ցաւերով: Նա ամբողջ մի ամիս էր հիւանդ պարկած կուռում էր իւր օրհասականի հետ, տանջուում էր անօգնական. մի այցելու—մի սառը ջուր տուող չկար: «Ջուր, ջուր, այլեւնչ վառն. . . աղաղակում էր մերձ իմահ ծերունին: Վերջին օրն էր: Երեւակայութիւնը սարսափելի խանդարեւած էր. նրա երեւակայութեան մէջ երեւում էր Սաքանի սառած դիակը, անմեղ Տեփանի կուրծքից թափուում էր արիւնը, բանդերի մէջ շղթայակապ չարչարելով Աթոյենց Գեւոն և Սարդարենց Կարապետը՝ աւանդում էին իրանց Հոգիքը. ամբողջ գիւղը կրակ ընկել այլուում է, ողբում էին բոլոր գիւղացիք, անտուն մնացած-

ները օգնութիւն էին խնդրում. մէկ էլ լանկարծ երևում էր դրանց մէջ զժոխքի կատաղի կառավարիչը՝ արիւնաշաղախ սուրբ ձեռին և գոռում էր, արգէն հալուած մաշուած Մարկոսի վրա.— «Հոգիդ տուր, զարշնի մարգ, այսքան մարդկանց անմեղ արիւնը թափեցիր, հազարաւոր անմեղների թշուառութեան պատճառ եղար. փչիր վերջին շունչդ, դաւաճան»:

Աշոթարանը բացեց, ծերունի Մարկոսը առանց խոստովանութեան և հաղորդութեան Հոգին աւանդեց:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Ս Խ Ա Լ.	Ո Ի Ղ Ի Ղ.	Երես.	Տող.
պրծնենք	պրծնինք	1	3
ժամուայ	ժամլայ	20	22
Համարեայ	Համարեա	33	2
սրճանների	սրճարանների	69	22
Հանեստ	Համեստ	74	23
պարք	պարտք	82	11
ամբուժելի	անբուժելի	85	23
յոյսդ	յոյսդ	87	10
այս	այդ	89	5
լինողներին	լսողներին	93	16

2

Handwritten scribble

ՀՀ Ազգային գրադարան



NL0349801

